

ՍՈՒՐԻՎ ԺՍՏԵԻ ՄԵՋ ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՅԵՅՈՒ

Սուրիոյ Արաքական Հանրապետութեան մասնակցութեամբ, Ժատտի մէջ ընթացք առաւ յառաջիկայ 19 Մայիսին արաքական գագաթնաժողովի տնտեսական խորհուրդի պատասխանատուներուն նախապատրաստական ժողովը:

Մասնակցող արաքական կարգ մը երկիրներու՝ ինչպէս Սեուտական Արաբիոյ, Լիպիոյ, Իրաքի, Մարոքի, Օմանի պատուիրակութիւնները եւ Արաքական Լիկայի քարտուղարին տնտեսական հարցերու օգնականը ողջունեցին Սուրիոյ մասնակցութիւնը այս ժողովին:



Շար. Էջ 2 >

ԲԵՐԻՈՅ ԸՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԸ ԵՒ ԻՐԵՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՅՅԻՆ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՆԱԽԱԳԱՋ ՀԱՖԵՋ ԱԼ-ԱՍՍՏԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Հինգշաբթի, 11 Մայիս 2023-ի յետմիջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Աջգարեանն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Սուրիոյ նախկին նախագահի հանգուցեալ Հաֆէզ ալ-Ասատի դամբարանը, Քրտահա:



Սրբազան հօր կ'ընկերակցէին Հոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Հոգշ. Ս. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեան, Բերիոյ Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ներկայացուցիչներ Աւօ Կարպուշեան եւ Նշան Լնդեան, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչ Արմէն Գասպար-

Նայրի կարապետեան
 Շար. Էջ 2 >

ՀՅԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊՐԻԷՍԵԼԻ ՄԵՋ ՏԵՐԻ ՈՒՆԵՅՈՒ ԵՌԱԿՈՐ ՄԱՆԻՊՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ



Պրիւսելի մէջ տեղի ունեցած եռակողմ հանդիպումից յետոյ Եւրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշլը պաշտօնապէս յայտարարել է, որ Հայաստանը ճանաչել է Ատրոպէյճանի տարածքային ամբողջականութիւնը 1991 թ. Ալմա-Աթայի Հռչակագրի հիման վրայ՝ 86.6 հազար քառ. քմ. տարածքով:

Յայտարարութիւնը տեղի է ունեցել Ատրոպէյճանի կողմէ Հայաստանի Արցախի Հանրապետութիւն-

ՀՀԳ Հայաստանի Գերագոյն Մարմին
 Շար. Էջ 3 >

ՓԱՇԵՆԱՆ ԵՒ ԱԼԻԵՒ ԳԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՅՈՒ ՀԱՄԱՐՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՏԱՐԱԾԵԱՅԻՆ ԱՄԲՈՂՉԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Եւրոպական խորհուրդի նախագահ Շառլ Միշլը Հայաստանի եւ Ատրոպէյճանի ղեկավարներուն հետ իր հանդիպումէն ետք իրապարակած է յայտարարութիւն մը, որուն մէջ ընդգծած է, թէ ունեցած են բաց, անկեղծ եւ արդիւնքի հասնելու միտում ընկերակցում:

«Անոնք կ'երդրոնացած են յառաջընթացի վրայ՝ Հայաստան-Ատրոպէյճան յարաբերութիւններու կարգաւորման առումով: Դեկլարարները կը բաժնեն Հարաւային Կովկասի մէջ խաղաղութիւն հաստատելու պատրաստակամութիւնը: Ես բարձր կը գնահատեմ անոնց համապատասխան ջանքերը: Միասին մենք ընկած ենք մեր օրակարգին վրայ գտնուող բոլոր»



Շար. Էջ 3 >

ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎՈՒԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, 11 Մայիս 2023-ի յետմիջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Աջգարեան հովուական անդրանիկ այցելութեամբ Ժամանեց Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցի, ուր ՀՅԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի փողերախումբը ինչեցուց Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները եւ «Կիլիկիա» մաղթերգը:



Սրբազան Հօր կ'ընկերակցէին Կրօնական ժողովի ատենապետ Հոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Ազգ. Վարչութեան անդամ Արմէն Գասպարեան: Պաշտօնական ընդունելութեան ներկայ էին Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վազգէն Քինյ. Քեօշկերեան, Զեսայի հոգեւոր տեսուչ Հոգշ. Ս. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեան, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի անդամներ, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդը, Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարանի Հոգաբարձութիւնը, տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը, կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմը, Լաթաքիոյ բարեսիրական, մար-

գական եւ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն, որոնք եկած էին շերմեռանդութեամբ դիմաւորելու Առաջնորդ Սրբազան Հայրը:

Եկեղեցւոյ մէջ, կանոնական աղօթքէն ետք, Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վազգէն Քինյ. Քեօշկերեան բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր, յայտնելով, որ Լաթաքիոյ հայութիւնը խանդավառութեամբ եւ խիստով այսօր կը դիմաւորէ բարի հովիւին տիպարը ներկայացնող Հալէպէն Ժամանած իր Բարեխնամ Առաջնորդը: Ան բարի



գալուստ մաղթեց Սրբազան Հօր, կշելով, որ օրհնեալ է իր գալուստը համայնքէն ներս, որովհետեւ կու գայ Տիրոջ անունով՝ Տիրոջ օրհնութիւնը բաշխելու բոլորին: Ապա ան հրաւիրեց Սրբազան Հայրը իր հայրական պատգամը ուղղելու ժողովուրդին:

Շար. Էջ 12 >

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅԵՐՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՒ ԱԶԳԸ ԽՕՍԲ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

Ճակատագրական պահեր կ'ապրին Հայաստանն ու ողջ հայությունը, որովհետև ատրպեյճանաթրքական պարտադրանքները յանուն այսպես կոչուած «խաղաղութան» կը ձրգտին թէ՛ Արցախը Ատրպեյճանի մաս դարձնել վերջնականապէս, թէ՛ հայ ժողովուրդի պատմական իրաւունքները հիմնովին, Հայաստանի սահմանադրութիւնն իսկ անտեսելով, մէկընդմիջտ ջնջել ու շրջապատել Հայաստանը տնտեսապէս եւ ռազմականօրէն:

2020-ի պատերազմէն վերջ, Ատրպեյճան, իր յարձակողապաշտ քաղաքականութեամբ եւ սպառնական ոճով, ամէն ջանք ի գործ կը դնէ Հայաստանին պարտադրելու այնպիսի պայմաններ, որոնցմէ ետդարձ կրնայ չըլլալ, եթէ պարտուողական համաձայնութեան մը տակ ստորագրութիւն դրուի հայկական կողմէն:

Արցախի բնակչութեան ինքնորոշման իրաւունքը բնաւ չ'արժարժուիր հայկական կողմէն, չի շեշտուիր, որ Ատրպեյճանի իսկ սահմանադրութեամբ հաստատուած է, որ Ատրպեյճան ժառանգորդն է 1920-ին անկախացած պետութեան, անոր տարածքներուն, որոնց Արցախն ու Նախիջեանը մաս չէին կազմեր:

Տակաւին Պրիքսէլի եռակողմ վերջին ժողովին մասին հրապարակուած լրատուութիւնն ու Շառլ Միշէլի մամլոյ միանձնեայ ասուլիսը անդրադարձ իսկ չէին կատարեր Ատրպեյճանի մէջ հայ գերիներու ճակատագրին ու Արցախի շրջափակման:

Փաստօրէն Հայաստան-Ատրպեյճան խաղաղութեան համաձայնութիւն չ'է որ կը նախապատրաստուի, այլ երկու երկիրներուն միջեւ եղած տագնապը կառավարելի դարձնելու փորձեր կը կատարուին, Հարաւային Կովկասի աշխարհաքաղաքական ներկայ մրցակցային պայմաններուն մէջ, որպէս Արեւմուտքի եւ Ռուսիոյ շահերու բախման հետեւանք:

Հայաստանի իշխանութիւնն ու հայ քաղաքական տարբեր ուժեր Ատրպեյճանի խոցելի կողմերը հարկ է որ լուսարձակի տակ բերեն, պարզեն անոր ոճրային արարքները, ներքին քաղաքական կեանքի փխրուն վիճակը, Արցախի ժողովուրդին ցեղասպանութեան ենթարկելու բացայայտ ծրագրերը ու դիւանագիտական բոլոր լծակները օգտագործեն գերծ մնալու Ատրպեյճանի ու անոր սատարող ուժերու բանեցուցած ճընշումներէն ու պարտադրող պարտուողական համաձայնութիւններէն:

Հայ քաղաքական ուժերն ու Սփիւռքը, քաղաքական գործիչներն ու մտաւորականները, աշխարհի տարբեր կողմերուն մէջ ազդեցութիւն ունեցող հայկական լուսային ճակատագրական այս պահուն է որ ցոյց պիտի տան տագնապի յարթահարման ու հայ ժողովուրդի, հայրենիքի շահերու պաշտպանութեան իրենց գործուն մասնակցութիւնը, անկախ հատուածական շահերէ:

Ամէն ժամանակներէ աւելի այս օրերուն հարկ է ստեղծել քաղաքական այնպիսի երկխօսութեան հարթակ, որ կրնայ փորկել հայրենիքն ու ազգը կործանումի առաջնորդող ծուղակներէ:

Խաղաղութեան ծածկոյթին տակ Հայաստանին ու հայ ազգին կը փորձեն հեւ ի հեւ պարտադրել ոչ միայն հողերէ, այլեւ տարբեր իրաւունքներէ հրաժարելու համաձայնութեան մը ստորագրութիւնը:

Յանձնուիլը լուծում չ'է, նոյնիսկ եթէ ուժային յարաբերութիւնը Ատրպեյճանի հետ հաւասարակշռուած չ'է: Եթէ միջազգային ուժեր կը ջանան կառավարելի դարձնել Հայաստան-Ատրպեյճան տագնապը, միւս կողմէ թուրքիան, օգտուելով առիթէն, սահմաններ բանալու պատրանք կը յառաջացնէ պարզապէս, իր կարգին գիշումներ պարտադրելով Հայաստանին ու հայ ազգին, հայկական կողմը եւս տագնապը կառավարելի դարձնելու իր բանաձեւը ունենալու է, առանց ուղղուելու հայրենիքին ու ազգին ճակատագրին առնչուող հապշտապ համաձայնութիւններու ստորագրութեան:

«Գ.»

-Քիմիական շէնքերու Կանխարգիլման Կազմակերպութեան մէջ Սուրիոյ Հանրապետութեան մաշուն բանազնաց Միլատ Աթիա քիմիական գէնքերու համաձայնութեան ընթացքին վերաբերող 5-րդ ժողովին յայտնեց, որ ԱՄՆ եւ արեւմտեան կարգ մը պետութիւններ կը շարունակեն միջազգային կազմակերպութեան աշխատանքը քաղաքականացնել: Ան կոչ ուղղեց մասնակցող պետութիւններուն լրջօրէն անդրադառնալու կազմակերպութեան աշխատանքի քաղաքականացման վտանգաւոր հետեւանքներուն:



-Զորքշարթի, 17 Մայիս 2023-ին սուրիական տարբեր նահանգներու մէջ 3.040.056 աշակերտ, բաժնուած 14.000 դպրոցներու մէջ, ուղղուեցան 2022-2023 տարեշրջանի երկրորդ կիսամեակի աւարտական ընտրութիւններուն: Ընտրութիւնները պիտի շարունակուին մինչեւ 25 Մայիս 2023:



-Զորքշարթի, 17 Մայիս 2023-ի տուեալներով, Սուրիական Կեդրոնական Դրամատունը ԱՄՆ տուլարին դիմաց սուրիական լիրային փոխարժեքը 8100 ս.ո. ճշդեց: Դրամատան հրապարակած ցուցակին համաձայն, երոյին դիմաց սուրիական լիրային փոխարժեքը ճշդուեցաւ 8.799.84 ս.ո.:



-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Սըքտատ ժատտէի մէջ արաբական գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքներուն շրջագիծէն ներս հանդիպումներ ունեցաւ իր լիբանանցի, թունուսցի, յորդանանցի եւ եմիրութիւններու պաշտօնակիցներուն հետ, ինչպէս նաեւ Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ահմետ Ապուլ Ղեթին հետ: Յետ հանդիպումներուն, նախարար Սըքտատ լրագրողներուն յայտնեց, որ բոլոր հանդիպումները մտերմիկ մթնոլորտի մէջ տեղի ունեցան, իսկ մասնակիցները խորհրդակցեցան այլազան հարցերու շուրջ:



ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՅ...

Սկիզբ՝ էջ 1
եան, Լաթաքիոյ եւ Քեսապի եկեղեցիներու թաղականութիւնները եւ Լաթաքիայէն ազգայիններ: Դամբարանի մուտքին սրբազան հայրն ու պատուիրակութիւնը դիմաւորեցին «Պաաս» կուսակցութեան Քրտահայի մասնաճիւղի քարտուղարը, մասնաճիւղի ղեկավար մարմնի անդամն ու շրջանի տնօրէնը, ինչպէս նաեւ դամբարանի տնօրէնը: Առաջնորդ Սրբազան Հայրը ծաղկեպսակ գետեղեց դամբարանին դիմաց որպէս յարգանքի եւ երախտագիտութեան արտայայտութիւն: Այնուհետեւ նախագահին շիրիմին դիմաց տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն. այցելուները աղօթք բարձրացուցին առ ամենաբարին Աստուած՝ խա-

ղաղութիւն հայցելով Սուրիական Հայրենիքին եւ բարի երթ՝ անոր վերականգնումի աշխատանքներուն:

ՍՈՒՐԻԱ ԺԱՏՏԵ...

Սկիզբ՝ էջ 1
Իր կարգին սուրիական պատուիրակութեան նախագահ, Սուրիոյ տնտեսութեան փոխնախարար Ռանիա Ահմատ յայտնեց, որ Սուրիան շնորհակալ է արաբական երկիրներէն՝ երկրաշարժի աղէտին լոյսին տակ Սուրիոյ ժողովուրդին ցուցաբերած իրենց օգնութիւններուն համար: Ան աւելցուց, որ Սուրիան նախանձախնդիր է սուրիացի տեղահանուածներուն տունդարձին նկատմամբ, ինչ որ կը պահանջէ անոնց բնակած շրջաններուն մէջ տնտեսական կեանքի նկատելի բարելաւում:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ...

Սկզբը՝ էջ 1

Լերի նկատմամբ ուժի շարունակական կիրառման եւ յարձակողապաշտութեան, ինչպէս նաեւ արցախահայութեան տեղահանութեան, ցեղային զըտման ցեղասպանութեան ենթարկելու ահագնացող սպառնալիքների պայմաններում:

Այս յայտարարությունը կատարուել է անտեսելով հետեւեալ հանգամանքները.

1. Հայնուի չեն առնուել՝ չեն յիշատակում ԱԳՅ ստեղծման մասին Համաձայնագրի վաւերացման ժամանակ Ալմա-Աթայի՝ ԱԳՅ ստեղծման մասին Համաձայնագրին կից Արձանագրութեամբ նախատեսուած իրաւատւթեամբ Հայաստանի Հանրապետութեան կողմից արուած վերապահումները:

2. Ատրպէյճանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը չի ներառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը. վերջիններս ԽՍՀՄ-ից անկախացել են տուեալ պահին գործող օրէնսդրական ընթակարգերին համապատասխան: Աւելին՝ Ատրպէյճանն իր անկախութիւնը յայտարարել է 1918-1920 թթ. Ատրպէյճանի ժողովրդավարական Հանրապետութեան իրաւայաջորդութեան հիման վրայ, որի կազմում Լեռնային Ղարաբաղը չի եղել:

3. Արհամարհուել են Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ միջազգայնօրէն ճանաչուած հիմնական ձեւաչափի՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեամբ ամրագրուած՝ բազմիցս յայտարարուած սկզբունքները, ինչպէս նաեւ Հայաստանի եւ ԵՄ միջեւ կնքուած «Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը»:

4. Նիկոլ Փաշինեանը իրաւասու չէ տալ համաձայնութիւն՝ առանց հայկական կողմի վերապահումներին յղում կատարելու, անտեսելով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, խախտելով Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան հռչակագիրը, Սահմանադրութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի Գերագոյն խորհուրդի 1992 թ. Յուլիսի 8-ի որոշմամբ ստանձնած յանձնառութիւնները, այդ թւում՝ այն, որ Հայաստանի Հանրապետութեան համար անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն կը նշուի Ատրպէյճանի կազմում:

5. Հայաստանի ներպետական օրէնսդրութեան նշուած պահանջները ապօրինի շրջանցելով, առանց Արցախի համաձայնութեան վերջինիս անունից՝ վերաբերեալ որեւէ համաձայնութիւն տալով Նիկոլ Փաշինեանը վերագրում է իր լիազօրութիւնները, օժանդակում է Արցախի հայաթափման՝ արցախահայութեան հայրենագրկման ալիւելին ռեժիմի քաղաքականութեանը, առերեւոյթ կատարում է առանձնապէս ծանր յանցագործութիւններ: Բացի այդ, Նիկոլ Փաշինեանի կողմից ի հակառակ իր, ինչպէս նաեւ իր իսկ կողմից գլխաւորած քաղաքական ուժի նախընտրական եւ ձեւաւորած կառավարութեան ծրագրերի, որեւէ յայտարարութիւն կամ գործողութիւն օրինական չէ եւ անխուսափելիօրէն առաջացնելու է քաղաքական, բարոյական եւ իրաւական յստակ հետեւանքներ:

Առ այդ, վերը նշուած հանգամանքների ներքոյ տրուած համաձայնութիւնները (նախատեսուող պայմանագրերը) Միջազգային պայմանագրերի իրաւունքի մասին Վիեննայի համաձայնագրի ուժով առջինից են:

Դիմելով միջազգային հանրութեանը՝ կոչ ենք անում մասնակից չդառնալ թոյլ չտալ 21-րդ դարի մարդկութեան դէմ ուղղուած հեղթական միջազգային յանցագործութիւնների իրականացմանը:

Սիրելի՛ արցախցիներ, սիրելի՛ հայրենակիցներ, չենք հաշտուում, չենք հանդուրժում: Ինքնորոշումն Արցախի ժողովրդի անքակտելի իրաւունքն է, որը չունի այլընտրանք:

Միասնական պայքարով եւ ազգային համաձայնութեամբ յաղթահարենք հայոց պետականութեանն ուղղուած գոյութեանական սպառնալիքը:

15.05.2023 թ.

ՓԱՇԻՆԵԱՆ ԵՒ ԱԼԻԵՒ...

Սկզբը՝ էջ 1

հարցերը», յայտարարած է Միշել:

Ան դիտել տուած է, որ խաղաղութեան համաձայնագրի շուրջ Միացեալ Նահանգներու մէջ վերջերս տեղի ունեցած դրական բանակցութիւններէն ետք պետք է պահպանուի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համապարփակ խաղաղութեան համաձայնագրի ստորագրման ուղղութեամբ վճռական քայլեր ձեռնարկելու թափը:

«Սահմանային հարցերուն մէջ մենք քննած ենք յառաջընթացը եւ սահմանի սահմանագատման առնչուած յաջորդ քայլերը: Այս ծիրին մէջ ղեկավարները համաձայնած են սահմանային հարցերու շուրջ երկկողմանի հանդիպումներու վերականգնման շուրջ: Ղեկավարները վերահաստատած են իրենց աներկբայ հաւատարմութիւնը 1991 թուականի Ալմա Աթայի հռչակագրին եւ Հայաստանի (29.800 քառակուսի քիլոմէթր) եւ Ատրպէյճանի (86.600 քառակուսի քիլոմէթր) համապատասխան տարածքային ամբողջականութեան: Սահմանի վերջնական սահմանագատման շուրջ համաձայնութիւն պիտի գոյացուի բանակցութիւններու միջոցով», յայտարարած է Եւրոպական Խորհուրդի նախագահը:

Ան նաեւ յայտնած է, որ կողմերը յստակ յառաջընթաց արձանագրած են շրջանին մէջ փոխադրամիջոցային եւ տնտեսական կապերու ապաշըրջափակման ուղղուած քննարկումներուն: «Այս սիրտին շուրջ կողմերու դիր-

քորշումները արդէն իրարու մօտ են, մասնաւորաբար Նախիջեւանի հետ եւ այդ հատուածով երկայնուողային հաղորդակցութիւնը վերականգնելու հարցին մէջ: Անոնց համապատասխան խումբերուն յանձնարարուած է վերջնական տեսքի բերել համաձայնագիրը երկայնուողային հաղորդակցութեան վերականգնման պայմաններուն եւ միացեալ շինարարական աշխատանքներուն մասին՝ որոշակի ժամանակացոյցով: Անոնք համաձայնած են այս աշխատանքին համար օգտուիլ Համաշխարհային մաքսային կազմակերպութեան աջակցութենէն», ըսած է Միշել:

Անդրադառնալով մարդասիրական հարցերուն՝ Միշել ընդգծած է, որ եղած է հասկացողութիւն, որ յառաջիկայ շաբաթներուն ազատ պիտի արձակուին մնացեալ պահուող անձերը: «Ես նաեւ ընդգծած եմ հասկացողութեան պահպանման անհրաժեշտութիւնը առ այն, որ զինուորները, որոնք պարզապէս մոլորուած եւ հակառակ կողմ անցած են, պիտի շարունակեն արագացուած կարգով ազատ արձակուիլ: Մենք նաեւ քննարկած ենք այստեղ կորուսածներու ճակատագիրները յստակացնելու եւ ականազ երծման աշխատանքները աշխուժացնելու կարելիութիւնը», ըսած է Միշել:

Եւրոպական Խորհուրդի նախագահը նաեւ յայտարարած է, որ շարունակած են քննարկումները «Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզին մէջ ապրող հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան հարցին վերաբերեալ: Ես Ատրպէյճանին կոչ ուղղած եմ միջազգային ընտանալիքին հետ սերտ համագործակցութեամբ մշակելու դրական օրակարգ՝ այդ բնակչութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը ապահովելու համար»:

Միշել աւելցուցած է, որ կարելի է թշնամական հռետորաբանութենէն զերծ մնալ, բարեխիղճ գործել, ինչպէս նաեւ ղեկավարութիւն դրսեւորելը փոխադարձ ընդունելի լուծումներու հասնելու համար: «Մենք թաքուն ծրագիրներ չունինք: Մեր միակ նպատակն է Հայաստանին եւ Ատրպէյճանին օգնել հասնելու համապարփակ եւ արդար խաղաղութեան: Մենք պատրաստ ենք մեր ներդրումը ունենալու անոնց միացեալ ջանքերուն մէջ: Մենք համաձայնած ենք Պրիւքսելի մէջ հանդիպումներ կատարել այնքան յաճախ, որքան անհրաժեշտ է: Ղեկավարները Յուլիսին կրկին պիտի հանդիպին Պրիւքսելի մէջ: Եւ, ինչպէս արդէն հրապարակուած է, ամենէն մօտ ժամկետներու մէջ մենք կրկին պիտի հանդիպինք նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ վարչապետ Օլաֆ Շոլցի մասնակցութեամբ՝ Քիւնեի մէջ Եւրոպական քաղաքական հանրութեան երկրորդ վեհաժողովի հարթակին վրայ: Ես մտադիր եմ նաեւ ղեկավարները իրաւիքել մասնակցելու նմանատիպ յանդիպումի Եւրոպական քաղաքական հանրութեան երրորդ վեհաժողովին, որ տեղի պիտի ունենայ Յոկտեմբերին Կրանսատայի մէջ», եզրափակած է Միշել:

Եւրոպական Խորհուրդի բանբեր Պարնետ Լեյթս աւելի ուշ «Թուիթթըր»-ի վրայ գրեց, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն հետ եռակողմ հանդիպման արդիւնքին վերաբերեալ Եւրոպական Խորհուրդի նախագահի յայտարարութեան նախնական տարբերակին մէջ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան վերաբերեալ սխալ թիւ հրապարակուած է:

Յայտարարութեան նախնական տարբերակին մէջ, որ հրապարակուած էր Եւրոպական Խորհուրդի կայքին վրայ, Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան իբրեւ թիւ նշուած է 89600 քառակուսի քիլոմէթր, որ ետքը խմբագրուած եւ դարձած է 86600 քառակուսի քիլոմէթր:

«Նախագահ Միշելի մասնւոյ յայտարարութեան մէջ սխալմունք կար: Նախագահին ականայ սխալ թիւ տրամադրուած է: Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան համար ճիշդ թիւը 86 հազար 600 քառակուսի քիլոմէթրն է: Սխալը անմիջապէս սրբագրուած է յայտարարութեան տպագիր տարբերակին մէջ», գրած է Լեյթս:

Աւելցնենք, որ Ատրպէյճանի համար իբրեւ տարածք նշուած 86600 քառակուսի քիլոմէթրը կը ներառէ Արցախը եւ Նախիջեւանը:

Վաջնորդութիւն Բերիոյ Հայոց Թեմի	Ուսումնական Խորհուրդ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ	
2023 - 2024 տարեշրջանին համար	
- Ազգային Մանկապարտեզը կարիքը ունի համալսարանաւարտ, մասնագետ ուսուցչուհիներու:	
- Ազգային Միացեալ վարժարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագետներու.	
- Անգլերէն,	
- Արաբերէն,	
- Ընկերային Գիտութիւն,	
- Համակարգիչ:	
Մանրամասնութեան համար հեռաձայնել 0932890929-0966463195:	

ՊՐԻՔՍԷԼԷՆ ԵՏՔ ՅԱԲԵԼԵԱԼ ՔԱՌՍ



Ս. Մահաբեզադե

Երկուշաբթի, 15 Մայիսին, Հայաստանի եւ ընդհանրապես հայկական աշխարհի մէջ արեւը դիմաւորուեցաւ՝ Փաշինեան-Ալիեւ պրիքսելեան վերջին հանդիպումին մասին մանրամասնութիւններու ողողումով: Եւրոպական խորհուրդի ներկայացուցիչ Շարլ Միշելի (եւ անոր ետին կանգնող Ուաշինկթոնի, Փարիզի, Պերլինի եւ այլ «խոհարարներու») կնքահայրութեամբ տեղի ունեցած հանդիպումին մասին տրուած տեղեկութիւնները ԱՆԳԱՄ ՄԸ ԵԻՍ հաստատեցին, որ Փաշինեանի իշխանութիւնը սիրայօժար կերպով Արցախը, ամբողջ Արցախը նուիրած է «արխատաշ» Ալիեւին: Ըսինք՝ «անգամ մը եւս», որովհետեւ հայութեան մէջ կան ուղեղի կուրուքներ տառապող յուշակորոյսներ, որոնք հակամետ են մոռնալու, որ մեր հայրենիքին ղեկին նստած մարդուկը շատո՛ւնց «աւետած» էր այս գիշումը, երբ, չէս գիտեր որո՞ւ թելադրանքով՝ մոռացութեան դարակներէն դուրս բերած է Ալմա Աթայի եսպէս մոռցուած համաձայնագիրը, հովին տուած էր անոր նկատմամբ Հայաստանի բոլոր վերապահութիւնները եւ ըսած էր, որ Հայաստան կը ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը: Ասկա



կը համապատասխանէ Սահմանադրութիւն, օրէնք, ժողովուրդի կամը եւ շատ ու շատ արժէքներ, ԱԶԳԱՅԻՆ արժէքներ ու իրաւունք հովին տալու վարքագիծին:

Չաճապարե՛նք: Հայաստանի իշխանութիւնները միշտ ալ ըսած են, որ կը ճանչնան Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, սակայն միշտ ալ ի մտի ունեցած են, որ այդ տարածքին մաս չի կազմեր, չի կրնար մաս կազմել հայապատկան Արցախը, որ, ինչպէս ծանօթ է, հանրաքուէով եւ կամքի այլ արտայայտութիւններով, վճռած էր դուրս գալ Ատրպէյճանի կազմէն (մնացեալը ծանօթ պատմութիւն է): Միւշելեան, փաշինեանական (ան)տրամաբանութեամբ, Ատրպէյճանի տարածքին ամբողջականութիւնը իր մէջ ունի նաեւ Արցախը, ամբողջ Արցախը, եւ ո՛չ միայն 44-օրեայ պատերազմէն առաջ ու անոր ճամբով խլուած հայկական հողերը, ներառեալ «դժբախտ ու տժգոյն Շուշի»-ն, որ եղած է հայութեան մշակոյթի օրրաններէն մէկը: Փաշինեան իր տրամաբանութիւնը քանիցս բարձրաձայնած էր, ըսելով, որ իր նպատակն է պահել 29 800 քառ. քմ. տարածութեամբ Հայաստան մը, տարածք՝ որուն ամբողջութիւնը երաշխաւորելու կարողութիւնն ալ չունի...

Հիմա, Պրիքսելէն կը հասնին նոր փաստեր. եւ թող աչք ունեցողը տեսնէ, ականջ ունեցողը՝ լսէ: Պրիքսելէն հասնող «աւետիս»-ը կ'ըսէ, որ Ատրպէյճան համաձայնած է որ Հայաստան ունենայ 29 800-ի տարածք, որուն դիմաց, Հայաստան կը ճանչնայ 89 600 (կամ 86 600) քառ. քմ.-նոց Ատրպէյճան մը:

Եւ... խառնաշփոթ պատկերը արդէն կը դառնայ քառասոյն, այսինքն՝ քառսը կը կրկնապատկուի (արդեօք Արարչագործութեանն առաջ տիրած քառսը այսպէ՛ս էր): Իսկապէս, ի՞նչ կը նշանակէ բերանացի յայտարարութեան եւ գրաւոր հաղորդագրութեան միջեւ տարածքի ա՛յսքան մեծ տարբերութիւն, երեք հազար քառ. քմ.: Վաղը բանավեճ պիտի ծագի, թէ սա կը նշանակէ, որ Արցախէն մնացած բաժինն է տարբերութեան առանցքը եւ սա պիտի հրամցուի իբրեւ «դիւանագիտական յաղթանակ»: Սա կը հետեւի այն մտածողութեան, որ եթէ Ատրպէյճանէն կարենանք կորզել 9 Նոյեմբերի կորստաբեր յայտարարութեան պայմանները, արդէն «յաղթելու ենք»-ը կը վերածենք «յաղթանակած ենք»-ի:

Քառսին այլ գործօններուն մասին խօսելէ առաջ, կ'ուզենք ընդգծել (միշտ ի մտի ունենալով փաշինեանապաշտները), թէ պրիքսելեան բանակցութիւնները ըստ էութեան սեղանի վրայ դրած են Հայաստան-Ատրպէյճան գիծին, այսինքն՝ անոնց միջեւ խաղաղութեան համաձայնագիր մը իրականացնելու միտող նիւթեր: Օրակարգի վրայ էին «ձերբակալուածներու փոխանակման պահանջը»: Սա յայտնապէս կը նշանակէ, որ Հայաստան կը պատրաստուի Ատրպէյճան վերադարձնել այն երկու գիւնդերակները, որոնք ապօրինաբար մտած էին Միւշելի եւ անոնցմէ մէկն ալ հայ

մը սպանած էր: Նման հաւանականութիւններով գարմանալու մեր զգայարանքը բթացած է արդէն (ինչպէս որ բթացած են իշխանութեան վնասաբեր ձախարհութիւնները տեսնել մերժողներուն ուղեղները): Ինչո՞ւ. որովհետեւ այս իշխանախումբը «վաստակ» ունի նաեւ այս կալուածին մէջ գիշումէ գիշում վազելու: 44-օրեայ պատերազմէն քանի մը ամիս ետք, նախապէս Արցախ թափանցած եւ մարդասպանութիւն կատարած երկու ազերի ոճրագործներ յանձնուեցան Ատրպէյճանի, ականապատ տարածքներու ամբողջական քարտէսը նուր տրուեցան, ոճրագործ Սաֆարով մը Ատրպէյճանին յանձնած (եւ հերոսացուած) Հունգարիոյ հետ դիւանագիտական կապերու վերահաստատում որոշուեցաւ առանց «փոխարժէքի»: Հիմա ալ «ձերբակալներ»-ու մասին խօսք կ'ըլլայ, առանց յիշատակելու մեր գերիները (վաղը եթէ անոնցմէ խումբ մը վերադառնայ, ո՛չ որ պիտի տխրի), որոնց թիւն իսկ յստակ չէ ու դարձած է սակարկութեան նիւթ, Պաքոյի կողմէ Հայաստանի վրայ ճնշումի լծակ:

Հիմա՛ քառսին մէկ այլ տարրին մասին: Պրիքսելեան բանակցութիւններէն ետք, յանկարծ աւելի՛ հնչել կը դառնան Հայաստանին ու Ատրպէյճանին ուղղուած կոչերը, թէ իրենց գօրքերը պէտք է սահմանագիծէն ետ քաշեն: Անոնք ալ նորութիւն չեն: Եթէ մոռցած էք, յիշեցէք, որ Փաշինեան քանիցս խօսած է «*ուժերը հայելային ձեւով են քաշուին* (եղեր) նոյնինքն Հայաստանի սահմանային գօտիէն: Յստակ է, չէ՞. սակարկութիւնը հիմա կը կատարուի... Հայաստանի հողերուն հաշուոյն: Արդէն իշխանաւորները խուլ ու կոյր կը ձեւանան ընդդիմադիրներու այն դիտարկումներուն դիմաց, թէ Ատրպէյճան Հայաստանէն ընդարձակ հողամասեր գրաւած է, - կամ իր հակակշիռին տակ առած, - անոր ախորժակները հոն կանգ չեն առած եւ վերջերս աւելի յաճախ խօսք կ'ըլլայ իբրեւ թէ ազերիապատկան «կղզեակներու» մասին: Ալիեւ որոշած է վերատիրանալ այդ հողերուն: Նոյնինքն Փաշինեան եւս, պատմական եւ աշխարհագրական իրականութիւնները ոտնատակ տալով՝ խօսած է եւ կը խօսի «ազերիներուն պատկանած հողերը պէտք է վերադարձնենք» եւ «պատրաստ եմ խաղաղութեան համաձայնագիր կնքելու» տրամաբանութեամբ, ատենին հայկական հողամասեր եւ շէներ կոչած էր ազերիական անուանումով (Պապէն աւելի պապական-ը գիտնեք, հիմա կը վարժուիք ազերիէն աւելի ազերիական ըլլալը): Այլ խօսքով, Ալիեւ արդէն իսկ ԱՆՅԵԱԼԻ Էջերուն նետած է 29 800-նոց Հայաստան մը, հետեւաբար, Պրիքսելի մէջ անոր ընդունածը ոչինչ կը նշանակէ, վաղը Սոթքի, Տեղի եւ սահմանային այլ շրջաններու վրայ յարձակումները կրնան նոր էջերով «հարստանալ»: Իսկ կնքահայրը... Պարզապէս կը շեշտէ խառնաշփոթ պատկերը, քառսը, որովհետեւ ո՛չ Եւրոպական Միութեան, ոչ ալ դաշնակիցի եւ բարեկամի համար իմաստ ունի Հայաստանի տարածութեան չափը: Անոնց համար կարելորդ միւսն է՝ շահն ու առելուորը: Եւ գարմանալի՞ է, որ Պրիքսելի մէջ բանակցողները կարելորած են երկպառօնի վերաբացման եւ այլ ճամբաներու թղթածրարը: Հապա Մարգարայի եւ Անիի կամուրջները, Ձերմուկին ու այլոց ուղղուած աչքերը...

Հայաստան արագօրէն կը վազէ գիշումէ գիշում, բանակցութեան իւրաքանչիւր փուլ քանի մը աստիճան աւելի՛ կը շեշտէ քառսային վիճակը: Ուրեմն, ինչպիսի՞ լաւատեսութեամբ պէտք է սպասենք յառաջիկայ փուլերուն՝ Ռեյքիալիքը, Քիշինեւը, դարձեալ Պրիքսելն ու մէջ ընդ մէջ... Մոսկուան: Միջանկեալ՝ գտնուած է այլ ժամանակ մը. Թուրքիոյ ընտրութիւններն ու անկէ սպասուող բարիքները (միւշելեան Թուրքիայէն ու Ատրպէյճանէն որեւէ ատեն բարիք չէ ծնած, ո՛չ մեզի, ոչ ալ այլ դրացիներու համար):


Չենք ուզեր այս սիւնակը երկարել՝ արձանագրելով պրիքսելեան եւ այլ բանակցութեանց ստեղծած արձագանգները, տեղի՛ն մտահոգութիւններն ու նոր կորուստներէ ետ կենալու կոչերը: Դիպուկ էր Արցախէն հնչած ահագանգը եւ այն բնութագրումը, թէ «*մենք ոչխար չենք, իսկ ոչխարին վախճանը խորոված ըլլալ է*»: Իրա՛ւ հայը, գետնաքար իշխանութեան երկրպագու(՞) չէրող հայը գիտէ, կը տեսնէ, թէ հայրենիքին եւ պետականութեան կորուստը օրէ օր կը դառնայ անխուսափելի, կը փաստուի, թէ սուտ են եւ կեղծիք՝ խաղաղութեան ու բարեշրջման՝ իշխանաւորներուն իւրաքանչիւր խոսումը, հաւաստիքը: Իսկ տնտեսական ու ընկերային բարեշրջումը: Երբ հայրենիքն ու պետականութիւնը դրուած են սակարկութեան սեղանին...

Լուծո՞ւմը...: Պետք ունի՞նք կրկնելու այն, ինչ որ ամէն օր ու ամէն ժամ կը դողանջէ Հայաստանի մէջ, Արցախի մէջ, Սփիւռքի տարածքին:

(*) Կ'արժէ ազգօգուտ առաջարկ մը ընել Գագիկ Ծառուկեանին: Այ մարդ, բլրի մը գագաթը Քրիստոսի արձանը տեղադրելու ծրագիրի փոխարէն՝ կրնաս կառուցել աւելի փոքր արձաններու, արտադրութեան գործատուն մը, պատրաստելու համար Փաշինեանի եւ «ուսապարկերուն» արձանները, արդիական կուռքերը: Չէ՞ որ Հայաստանի մէջ նախաքրիստոնէական բարքերուն եւ հաւատալիքներուն վերադառնալու մարմաշ կայ, չէ՞ որ հայկական նախաքրիստոնէական պանթէոնը ունէր բազմաթիւ աստուածներ: Իշխանութեան համակիրները գոնէ իրենց յարկերուն տակ կ'ունենան կուռքերը նոր Արամազդներու, Անահիտներու, Աստղիկներու, Նանէներու, Վանատուրներու եւ Տիրերու, դուն քեզի աւելի յարմար աւագանի մը մէջ կը լողա:

Երիտասարդական Ուսման

ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԸ ԵՒ ՄԵՆՔ



Վեհան Պարսումեան

Երբ փոքր էիք «Համբարձում» մեզի համար կը նշանակէր պտոյտ մը դէպի Սեպիլի այգի, համով ուտելիքներ, նոր փչովի գնդակ մը, շաքար-բամպակ, տապկուած եգիպտացորեն, անսպառ խինդ ու ծիծաղ:



Իւրաքանչիւր Համբարձման Հինգշաբթի պատարագէն ետք հորաքոյրս իմ ու եղբորս ձեռքերը բռնած կ'ուղղուէր Սեպիլ: Ծամբայէն վերոնշեալները առնելը պարտադիր պայման էր: Այգիին մէջ նստարաններուն վրայ կը տեղաւորուէինք ու կը բացուէր ուտելիքներու սակառը: Կշտանալէ ետք կը վագէինք խաղավայր՝ օրօրոցներ, սահնակներ, ինչէր ու ինչէր: Իսկապէս ուրիշ ինչ պէտք էր մանուկի մը ուրախութիւն պարգեւելու համար: Կեսօրէ ետք մայրս հրաւիրուած կ'ըլլար «իրական» Համբարձումի, սակայն «ոտքի տակ չիլնալու» համար մեզի իր հետ չէր տաներ, ուստի Համբարձումի իսկական օրէնքները չէն տաւորուած մտքիս մէջ:

Աւելի ուշ Համբարձումը ինծի համար «Անոյշ» օփերան էր, որ ամէն տարի Համբարձման գիշերը կը ցուցադրուէր Հայաստանի Առաջին Ալիքէն: Յայնժամ Համբարձումը ինծի համար սարսափազդու էր. կը վախնայի, որ երբ մեծնամ ու վիճակ քաշեմ, իմս Անոյշին պէս վատ պիտի ըլլայ: Սակայն բարեբախտաբար քանի մը տարի ետք այդ վախը չքացաւ:

Մօտաւորապէս երեք-չորս տարի է Համբարձման տօնը ուրիշ տե-

սանկիւնէ կը դիտեմ: Կ'ըսուի, որ Համբարձման արարողութիւնները գուտ քրիստոնէական անարդիւնքներ են, սակայն ես համամիտ չեմ: Եթէ տօնը գուտ քրիստոնէական է, ինչո՞ւ միւս քրիստոնէայ համայնքները մեզի պէս չեն տօներ: Տօնը նուիրուած է քրիստոսի երկինք համբարձման, բայց անդին կայ վիճակը, ջան կիւլիւմը, գորս կը կասկածիմ որ քրիստոնէական հիմքեր ունին: Պրպտեցի, պրպտեցի, ու գտայ...: Հաստափոր փոշոտած երազահանի մը մէջ, որուն քիչ մը ատելի հաստը կամ ատելի բարակը բոլոր տուններուն մէջ կը գտնուի: Երազահանը կ'ըսէ, թէ ծաղկունքի շրջանին տօն մը եղած է, որ նուիրուած է Անահիտ Մայր դիցունիին: Այս տօնը կը տօնէին կանայք, որոնք ծաղիկներ, բոյսեր ու միրգ երկը նուիրաբերէին Մայր Դիցունիին, որպէսզի պտղաբեր տարի մը ունենան, ամուրիկն ինչ, նշանուողը ամուսնանայ, ամուսնացողը մայրանայ եւ այլն...:

Այս տարի սակայն տարբեր է: Առաջին անգամ ըլլալով հրաւիրուած եմ Համբարձում(ներու) իբրեւ հարսնացուներու ընկերուհի: Կը կարծեմ, որ այս տարի առաջին անգամ ըլլալով պիտի առնեմ Համբարձումին «Համն ու հոտը», յարգելով բոլոր անարդիւնքները:

Ընկերներս կ'ըսեն, որ Համբարձումը «կնիկական» տօն է, այն իմաստով որ տակաւին կան մարդիկ, որոնք իրենց տղաներուն հարսնացու գտնելու համար Համբարձումի հրաւիրուած աղջիկները կը չափչփեն, ու նուէրները կամ հիւրապիտակները չհանելով հոս-հոն կը բամբասեն: Այդ իսկ պատճառով շատերս կը խուսափինք նման առիթներու ներկայ գտնուելէ: Սակայն ես կը կարծեմ, որ գեղեցիկ է Համբարձման անարդիւնքը եւ կ'արժէ պահել ու արժեւորել զայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԵՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅԱՒ «ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԱԽՏԱՒՈՐՆԵՐԸ. ՌՈՒՔԷՆ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԲԱՆԱԽՍՈՒՅԻՆ ԽՈՐԱԳԻՐՈՎ ԲԱՆԱԽՍՈՒԹԻՒՆ

5 Մայիսին, ժամը 16:30-ին, Հայաստանի Պատմութեան Թանգարանին մէջ տեղի ունեցաւ «Հայ Ազգագրութեան Երախտաւորները. Ռուբէն Պարսումեան» խորագիրով բանախօսութիւն:

Բանախօսն էր գեղանկարիչ, ազգագրագետ Հրազդան Թոքմաճեան:

Ան հակիրճ խօսքերով ներկայացուց Յեղասպանութենէն ետք Այնթապէն-Հայէպ տարագրուած Պարսումեան ընտանիքի պատմութիւնը: Անոնց սերունդէ-սերունդ արիեստի մէջ արձանագրած յաջողութիւններն ու գիրգրականութեան, գիտելիքի նկատմամբ ունեցած ինքնաբոլիս հետաքրքրութիւնները:



Ռուբէն Պարսումեան եւ Հրազդան Թոքմաճեան, 2005թ., Հայէպ, Ճոնթոն, Աուճէթ Բայալի, լուսանկարը՝ Յակոբ Մոմճեանի:

Հ. Թոքմաճեան լուսարձակի տակ առաւ Ռուբէնի հետաքրքրու-



թիւններու լայն շրջանակը՝ թատրոնէն մինչեւ արիեստագործութեան տարբեր ճիւղեր: Ներկայացուց անոր տասնամեակներու վրայ երկարող ազգօգուտ աշխատանքը: Անդրադարձ եղաւ թէ՛ Պարսումեանի հարուստ հաւաքածոյին, թէ՛ Սուրիոյ մէջ հաստատուած տարագիր հայ արիեստաւորներուն վերաբերող արխիւային արժեքաւոր նկարներուն:

Հանդիպման ընթացքին ցուցադրուեցաւ Ռուբէն Պարսումեանի պրոֆէսիօնալ հաւաքածոն ներկայացնող փաստագրական տեսաֆիլմ՝ իր մեկնաբանութեամբ:

Ձեռնարկին ներկայ էին թանգարանի գիտաշխատողները, ֆոնտապահները, ինչպէս նաեւ Ռ. Պարսումեանին քաջածանօթ բազմաթիւ հալէպահայ հայրենակիցներ:



ԱԶԳ. ԲԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳԻՐ ՆԻՍՏ

Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարանի Հայաստանի Շրջ. Միութեան կազմաւորման եւ հիմնադրութեան անդրանիկ հանդիպումը տեղի ունեցաւ Կիրա-



կի, 14 Մայիս 2023-ին, «Արամ Մանուկեան» կեդրոնէն ներս: Ժողովին կը մասնակցէին Ճեմարանի նախկին ուսուցիչներ, քահանայ հայրեր, խնամակալութեան նախկին անդամներ եւ տարբեր սերունդներէ Հայաստան

հաստատուած ճեմարանականներ:

Ներկաները իրենց սրտի խօսքերուն ընդմէջէն յոյժ գնահատելի գտան այս ծրագիրին իրականացումը: Սրտագին բաղձանք մըն էր Հայրենիքի մէջ հաստատուած բազմաթիւ ճեմարանականներու համար՝ կազմել Շրջանաւարտից Միութիւն, որուն հիմնական նպատակը պիտի ըլլայ մեկտեղել ճեմարանականները եւ անոնց կարելիութիւնը ի սպաս դնել ճեմարանի եւ ճեմարանականներուն օժանդակութեան:

Ապա ժողովը առաջարկներ ներկայացուց եւ կարծիքներ փոխանակուեցան այս առաքելութեան հեզասահ ընթացքին գծով:

Ժողովի աւարտին յայտարարուեցաւ նշանակուած Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարանի Շրջ. Միութեան Հայաստանի Անդրանիկ կազմը հետեւեալ պատկերով.

- Ռաֆֆի Աւետիսեան (ատենապետ)
- Ժիրայր Կարապետեան (ատենադպիր)
- Արամ Լեպէպճեան (գանձապահ)
- Կարօ Իւզպաշեան
- Մարի Մերտիանեան
- Խաչիկ Ճոզիկեան
- Համբիկ Ճապաղջուրեան
- Էլենա Աւագեան
- Սեւակ Սիւլահեան
- Սամիկ Պարիխան:

Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԵՒՅՑ ՄԵՋ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ 2-ՐԴ ՓՈՒԼ

Կիրակի, 15 Մայիսին Թուրքիոյ մէջ տեղի ունեցան նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնները: Առաւօտեան ժամը 8:00-ին բացուեցան երկրին տարածքին տեղադրուած 191.885 քուէատուփեր:

Երեկոյեան, Թուրքիոյ Բարձրագոյն Ընտրական Յանձնաժողովի նախագահ Ահմետ Եւենը պաշտօնապէս յայտնեց, որ նախագահի թեկնածուներէն ոչ մէկը յաջողած է ստանալ 50%+1 քուէ: Ուստի նախագահական ընտրութիւնները կը տեղափոխուին 2-րդ փուլ, որ տեղի պիտի ունենայ 28 Մայիսին:



Այսպիսով 2-րդ փուլին պիտի մասնակցին նախագահական ընտրութիւններուն առաջին փուլին ամենաշատ ձայներ հաւաքած առաջին 2 թեկնածուները, տուեալ պարագային՝ իշխող ուժի «Ժողովուրդ» (Cumhur) դաշինքի միասնական թեկնածուները:

Ռեճեպ Թայիպ Էրտողան (49.50%) եւ ընդդիմադիր «Ազգ» դաշինքի միասնական թեկնածու Էլլըլչուարօղլու (44.89%):

Աւելցնենք, որ Թուրքիոյ եւ արտասահմանի մէջ քուէարկելու իրաւունք ունեին անելի քան 64,1 միլիոն քուէարկող: Շուրջ 4,9 միլիոն քաղաքացիներ առաջին անգամ ըլլալով քուէարկեցին:

Ընտրողներուն տրուեցաւ 2 քուէաթերթիկ՝ նախագահի եւ երեսփոխաններու համար: Ընտրողները երկու առանձին քուէաթուղթեր տեղադրեցին մէկ ծրարի մէջ եւ գայն նետեցին քուէատուփին մէջ:

Քուէատուփերը փակուեցան ժամը 5:00-ին, որմէ ետք ընթացք առաւ քուէներու հաշուարկը: Ըստ նախնական տուեալներու, նախագահական ընտրութիւններու մասնակցութեան համեմատութիւնը 88,31 առ հարիւր է:

Խորհրդարանական ընտրութիւններու մասնակցութեան համեմատութիւնը 85,46 առ հարիւր է, քուէատուփերու 19,4 առ հարիւրի արդիւնքներուն համաձայն, իշխող «Արդարութիւն եւ Բարգաւաճում Կուսակցութիւն»-ը ապահոված է քուէներուն 40,9 առ հարիւրը (288 աթոռ), «Հանրապետական Ժողովուրդի Կուսակցութիւն»-ը՝ 19,56 առ հարիւրը (150 աթոռ), «Ազգայնական Շարժում Կուսակցութիւն»-ը՝ 13,05 (61 աթոռ) առ հարիւր, իսկ «Լաւ Կուսակցութիւն»-ը՝ 9,09 առ հարիւր (44 աթոռ):

ԹՈՒՐԵՒՅՑ ՆԱԽՈՐԴ ՈՒՆԵՐԿԱՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԵՄՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

«Էրմէնիհայէր»- Թուրքիոյ մէջ եթէ նախագահական ընտրութիւններուն համար անհրաժեշտ էր ստանալ 50+1% ձայն, որպէսզի ըլլայ 2-րդ փուլ, խորհրդարանի (ՄԵԸԽ) համար նման պայման չկայ: Ըստ ոչ-պաշտօնական արդիւնքներու՝ խորհրդարանին մէջ արդէն ձեւաւորուած է աթոռներու բաշխման պատկերը: 2018-ին 27-րդ գումարման խորհրդարանի համեմատ այս ընտրութիւններուն կուսակցութիւններու եւ դաշինքներու աթոռներուն պատկերը տարբեր է:

Համաձայն 28-րդ գումարման Ազգային մեծ ժողովի (ՄԵԸԽԻ) ընտրութիւններու ցարդ նախնական արդիւնքներուն՝ իշխող «Միութիւն եւ Զարգացում Կուսակցութիւն» (AKP) - 34,42%, ընդդիմադիր «Ժողովուրդի Հանրապետական Կուսակցութիւն» (CHP) - 25,39%, «Ազգայնական Շարժում Կուսակցութիւն» (MHP) - 10,06%, «Լաւ Կուսակցութիւն» (İYİ) - 9,82%, «Կանաչներու Զախ Կուսակցութիւն» (Yeşil Sol Partisi) - 8,78%, «Նոր Բարօրութիւն Կուսակցութիւն» (Yeniden Refah Partisi) - 2,85%, «Թուրքիոյ Աշխատատեղական Կուսակցութիւն» - (Turkiye isci Partisi) 1,71%:



Խորհրդարան մուտք գործելու 7 տոկոսնոց շեմը չեն յաղթահարած «Յաղթանակ Կուսակցութիւն»-ը (Zafer Partisi) (2,25%) եւ «Հայրենիք Կուսակցութիւնը» (Memleket Partisi) (0,9%):

2018-ի արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններուն համեմատ արդիւնքները հետեւեալն են՝

- «ՄՅԿ» 2018-ին 42,56% (295 աթոռ), 2023-ին՝ 35,4% (266 աթոռ):
- «ԺԻԿ» 2018-ին 22,65% (146 աթոռ), 2023-ին 25,37% (168 աթոռ):
- «ԱԾԿ» 2018-ին 11,1% (49 աթոռ), 2023-ին 10,06% (51 աթոռ):
- «Լաւ Կուսակցութիւն» 2018-ին՝ 9,96% (43 աթոռ), 2023՝ 9,84% (44 աթոռ):
- «Նոր Բարօրութիւն Կուսակցութիւն»-ը առաջին անգամ կը մասնակցի 2023-ի ընտրութիւններուն եւ մաս կը կազմէ իշխող ուժի «Ժողովուրդական Դաշինք»-ին ու կրնայ ստանալ 5 պատգամաւորի աթոռ:

ԿԵԱՆՔԻ ԴՊՐՈՅԷՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ



Խորեն Զիյ, Պէրթիզէն

Երեխային անմեղ ժպիտը անհոգ մանկութեան նշան է: Երիտասարդին խօսուն ժպիտը խանդավառութեան նշան է: Ծերունագարդ մարդուն խորհրդաւոր ժպիտը հոգեկան գոհունակութեան արտայայտութիւն է:

Ծաղկուն են օրերդ՝ երբ սիրոյ մղումով կը ծառայես: Ծաղկագարդ է կեանքդ՝ երբ քրիստոսի օրինակով բարիք կը ցանես:

Երբեմն միակերպութիւն կը զգանք, որովհետեւ կը մոռնանք Աստուծոյ ամենուրեք ըլլալը:

Եթէ ճշմարտութեան կողմակից չենք՝ կեղծիքներով պիտի հրապուրուինք:

Միտքդ արթուն է երբ արդարադատ ես, միտքդ պայծառ է երբ իմաստուն ես, միտքդ մաքուր է երբ արթօղ ես:

Կամքի տկարութեան պատճառով մեղքերը կը բազմանան: Ուստի «Բարի գալուստ»-ով կը դիմաւորենք չարը:

Ուշադրութեամբ լսելն ալ կարեւոր յատկութիւն է: Բայց ընդհանրապէս շատե՛ր լաւ խօսողը կը գովեն: Լսելը որոշ չափով համբերութեան հետ կապ ունեցող տուեալ է, իսկ խօսիլը՝ հաւանաբար համարձակութեան հետեւանք:

Մենք մեր մայրերուն խնամքը սկսած ենք վայելել մեր ծնելէն իսկ առաջ, երբ կը կազմաւորուէինք անոնց որովայնին մէջ: Երբ անոնց սնունդով անցանք եւ անոնց շունչով ապրեցանք: Ի՞նչ աստուածային խորհուրդ: Բիւր յարգանք մայրերուն:

Մայրը սիրոյ հաւատարիմ թարգմանն է, նուիրումի խօսուն օրինակն է, գուրգուրանքի արտայայտիչն է, աղօթական բարեխօսն է եւ կեանքին գեղեցկութիւնը պարզող արուեստագետն է:

Տան մէջ մայրերուն մատնահետքերը սիրոյ հոգեխօս հպումներ են:

Մօր նկատմամբ կարծրասիրտ եղողը ապերախտ եւ զԱստուած ուրացող է:

Մենք մեր մօր Էութենէն անբաժան ենք: Պորտալարը կը խզուի, բայց մօր նկատմամբ հոգեհարազատ կապուածութիւնը կը մնայ անբաժանելի:

Մօր մահուան տխուր առթիւ սուգի զգացողութիւն չունեցողը, մարդկային կոչումէն հրաժարած մըն է:

Ընտանիքը առանց սրբութեան ենթակայ է քայքայումի: Սիրոյ հաստատումը, յարգանքի ներկայութիւնը եւ անկեղծ հաղորդակցութիւնը մեծապէս կը նպաստեն տան սրբութեան:

Ընտանիք կազմողը ազգապահպանման վեհ գործին մասնակից կը դառնայ:

Եսասերը նաեւ մեծամտութենէ կը տառապի: Կ'ուզէ իր ետով ապրիլ, անձնականով բաւարարուիլ եւ սեփականով սահմանափակուիլ:

Շողջորթը երկերես ըլլալու սահմանը անցնելով բազմերես կ'ըլլայ: Շատ խօսող եւ քիչ հասկցնողը ժամանակը եւ համբերանքը չարաչար կ'օգտագործէ: Զիչ խօսող եւ շատ հասկցնողը չափաւոր խօսելու հմտութիւն ունի եւ միտքը պարզելու իւրայատկութիւն:

Խօսքը գործի վերածողը աշխատասիրութիւնն է: Գործը ակարտին հասցնողը յարատեւութիւնն է:

Բարի յիշատակը բարոյական հարստութիւն է, իսկ բարի օրինակը՝ առաքինի կեանքի վկայութիւն:

Շահեկան կարծիքները յարգելու ենք, մեզի կը մնայ ընտրել յարմարագոյնը, որպէսզի մեր մտահորիզոնը մնայ պայծառ եւ ըլլայ նոր արշալոյսի նախանշան:

Եթէ կեանքիդ մէջ ունիս բարիք սերմանելու փափաք, գիտութիւն տարածելու ձգտում, ծառայելու եւ սիրելու մղում, ուրեմն դուն ունիս աստուածահաճոյ ընթացք:

Եկեղեցին Տիրոջ անպատմելի սերը կը հռչակէ, փրկութեան հրաւերը կը փոխանցէ եւ Արքայութեան նախաճաշակը ստանալու առիթը կ'ընծայէ:

Երբ ապրինք սորվելու կամեցողութեամբ՝ անելի հաճոյք կը ստանանք կեանքէն, անթիւ դասատուներ տարբեր ոճով եւ տարբեր առիթներով մեզի դասեր կը փոխանցեն:

Մանկութիւնը երկու խօսք է, պատանութիւնը բացման խօսք, երիտասարդութիւնը սրտի խօսք, կեանքը՝ թատերաբեմ, մարդը՝ դերակատար, արարքները՝ ներկայացում, խիղճը՝ յուշարար, միտքը՝ բեմադրիչ, իսկ ծերութիւնը՝ հրաժեշտի խօսք:

Դրական միտքեր մերժողը գործի յաջողութեան արգելք հանդիսացող խանգարիչն է:

Յաջողութիւնը հաց է, վերելքը՝ հացատուն, իսկ նուաճումը՝ հացկերոյթ: Դեքիաթը անտառ է, վեպը՝ դաշտ, պատմութիւնը՝ պարտեզ, յօրուածը այգի, իսկ բանաստեղծութիւնը՝ ծաղկաքաղ:



Պրիմալետ

ՀՈԳԵՏՈՒՆԸ



Մարուշ Երամյան

Կար ժամանակ, երբ Հոգետունը Հայկաի տեսարժան վայրերն մեկն էր, եւ կար ժամանակ ա՛յդ ժամանակէն առաջ, երբ Հոգետունը կարելոր կեդրոն մըն էր, ընդհանրապէս՝ հոգիի կեդրոն մը, որովհետեւ այնտեղ էին «Ոսկետառ» տպարանն ու Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան կեդրոնը, ուր պատասպարուած էր նաեւ գրադարանը:

Հոգետունը երկու մուտք ուներ՝ մէկը Թիլէլէն, կամարածեւ մուտք մը եւ վրան հայերէն ու արաբերէն «Հոգետուն» գրուած, ուրկէ մտնելէ ետք քանի մը լայն ու ցած աստիճաններով կը հասնէիք բակը, որուն ճի՛շդ դիմացն էր տպարանը:



Աջին նեղ ու բարձր աստիճանները կը տանէին վեր՝ Տիգրանակերտցիներուն գրադարանը:

Ամէն Կիրակի ժամը տասին բաց էր գրադարանը. արծուիկութենէն ելլող տիգրանակերտցի աղջնակներն ու աղջիկները դէպի տուն ճամբուն վրայ անպայման կ'այցելէին գրադարան, եթէ ոչ գիրք վարձելու, - շաբաթական կարծեմ տասը դրուշ էր մէկ գիրք առնելը,- ապա գունք քիչ մը զբաղելու, քիչ մը երկարելու տունէն դուրս անցուած ժամանակը: Բայց գիրք ալ կ'առնէին, որովհետեւ այդ օրերուն մեր հաճելի զբաղումներէն մեկն էր կարդալն ու կարդացածին մասին կարծիքներ փոխանակելը:

Բայց այս բոլորէն շա՛տ առաջ, ըստ Հայկաի առաջնորդ Արտաւազդ Սիւրմեան Արք. -ին, Հոգետունը իջեւանատուն մը եղած է Կիլիկիայէն եւ Փոքր Ասիոյ կողմերէն երուսաղէմ գացողներուն համար:

«Հոգետունս դարերէ ի վեր գոյութիւն ունեցած է պարզապէս իբր հոգեւոր պանդոկ, հանգիստ տալու վերէն կամ վարէն հոն հասնող ուխտաւորներուն»:

Յիշատակարան մը կ'ըսէ, թէ կառուցուած է 1624 թուականին, որպէս Սուրբ Յակոբայ Տուն, ապա գրեթէ հարիւր տարի ետք՝ 1721-ին կը նորոգուի, կը բարեգարդուի եւ անոր վրայ սենեակներ կ'աւելցուին:

1915-էն ետք այս եւ նման հոգետուններ գլխաւորաբար կը ծառայէն Արեւմտահայաստանէն հասնող գաղթական հայերուն որպէս բնակարան:

Հոգետան ընդհանուր տարածութիւնը 450 ք.մ է, իսկ միայն բակը՝ 161 ք.մ: Ունեցած է 23 սենեակ, եւ հոր մը բակին ճիշդ մէջտեղը:

Երբ աղջամուղը իջնէր, ամենէն առաջ Հոգետունը կը մթնէր եւ հոնկէ անցնիլը սոսկում կը պատճառէր ինծի, թերեւս անկիւններուն մէջ կուտակուած շուքերուն եւ ամայութեան պատճառով, թէւ այդ ժամերուն բնաւ մինակն չէի ըլլար, հօրս կամ մօրս հետ կ'ըլլայի. որքան որ սիրելի էր Հոգետունը Կիրակի ամուսնուրը, այնքան վախազդու էր իրիկուններուն:

Հոգետունը կը կրճատէր ճամբան Քառասնից Մանկանց եկեղեցիէն մինչեւ Թիլէլ, որ կրնար համեմատաբար երկար ըլլալ, եթէ ըլլային Սալիպէի նեղ թաղերը, որոնք կը կապէին այդ շրջանը ոչ միայն Թիլէլին, այլ նաեւ Ճիտէյտէին, որ հալէպահայերուն գլխաւոր շուկան էր: Շաբթուան որեւէ օրուան առաւօտուն կարելի էր տեսնել իրար հանդիպած երկու բարեկամուհիներ կամ ազգականուհիներ, որոնք առանց ուշք դարձնելու կանաչեղէնի, պտուղի, հաւի կամ միսի ծանր տոպրակներուն, կեցած կը գրուցէին իրարու հետ մե՛ծ ախորժակով:

-Լարս,- կ'ըսէ մեծ մայրը աղջկաս,- շուկայ պիտի երթամ, կու գա՞ս հետս:

-Կու գամ միայն եթէ թաքսիով երթանք,- պայման կը դնէ աղջիկս:

-Հոսկէ ճիտէյտէ երկու քայլ է, ինչո՞ւ թաքսի,- կը գարմանայ մայրս: Իրապէս ալ նախկին հրշեջներուն կեդրոնին դիմացի կողմը գտնուող մեր տունէն մինչեւ ճիտէյտէ տասը վայրկեանէն կարելի էր քալելով հասնիլ:

-Ճամբուն համար չե՛մ,- կ'ըսէ Լարան,- բայց ամէն քայլի մէկը կը կեցնէ քեզի՛ բարե՛ւ, տիկին Արուսեակ, ինչպե՛ս ես, գիտե՛ս, տղան որ տուիլ ինծի, հիմա ի՛նչ մեծ երիտասարդ դարձեր է ... ամէն քայլի մէկը կը կեցնէ, կը ձանձրանամ սպասելէն ... եթէ թաքսիով կ'երթաս, կու գամ:

-Մի՛ գար ուրեմն,- կ'ըսէ մայրս եւ հարցը կը փակուի:

Վերջին տարիներուն երեքշաբթի օրերը այլ տեսք կը ստանար ճիտէյտէն, որ կը լեցուէր շատ վայելուչ արտաքինով օրհորդներով եւ տիկիներով, որոնք Քառասնից Մանկանց եկեղեցի կը շտապէին, Ս. Մինասի նուիրուած պատարագին երթալու, անցնելով Փայտի հրապարակէն, ուր միշտ ալ քանի մը ծերունիներ կը գրուցէին եւ մեծ թիւով մանուկներ կը խաղային:

Այդ նեղ թաղերը կը տանէին նաեւ Թիլէլի մէջտեղէն բաժնուող փողոցէն դէպի Ֆարհաթ անել հրապարակը, ուր երեք եկեղեցիներ քովէ քով, դարերէ ի վեր կը հսկէին կարծես հալէպի քրիստոնէայ բնակչութիւնը՝ Սըրբոց Քառասնիցը (հրապարակէն քիչ մը ներս), Մարոնիներուն եւ Յոյն կաթողիկէներուն եկեղեցիները: Հրապարակը կը կոչուի Գաբրիէլ Գերմանով Ֆարհաթ Արք.-ին անունով (1670-1732), որուն արձանը՝ թիկնաթռռի մը վրայ բազմած, կ'իշխէ հրապարակին վրայ: Այս արձանը վնասուած էր Հայկաի ռմբակոծումի շրջանին, բայց այսօր նոյն վեհափառութեամբ կը շարունակէ հսկել բնակչութիւնը:

Այս շրջանին մէջ են անշուշտ նաեւ Հայկազեան երկու՝ աղջկանց եւ մանչերու վարժարանները. այս վերջինը տեղաւորուած էր հին եւ մեծ տան մը՝ Պեյթ Ղազալի մէջ, որ յետոյ հնագիտութեան պատկանելուն, դարերեցաւ դպրոց ըլլալէ եւ դարձաւ Հայկաի ճարտարապետութիւնը ներկայացնող հնագիտական կարելոր տուն մը:

Երբ արծուիկ էի, մեր կիրակնօրեայ հաւաքները այդ տան մէջ կ'ըլլային. հոն երթալը նոյնքան կը խանդավառէր զիս, որքան արծուիկ ըլլալս, մանաւանդ որ ամէն Կիրակի սկաւտական տարագով կ'երթայիս, բան մը որ շատ կ'ուրախացնէր մանուկի հոգիս եւ հպարտութեամբ կը լեցնէր զիս: Բակին շուրջի սենեակներէն պատուհաններ կը բացուէին, որոնց վրայ փորագրուած դրասանգերը երեւակայութիւնս կը լարէին, կը կարծէի գիտնալ, թէ այնտեղ փոքրիկ իշխանուհիներ ապրած են, որոնք երբեմն մառանները կամ խորերը գտնուող սենեակները դրուած են որպէս պատիժ, իրենց անհնազանդութիւններուն համար:

Այդ խորունկ սենեակներուն մէջ սակայն դասարաններու վառարաններուն համար դրուած թիթեղներն էին, ուրկէ մագուղ մգեր էր յաճախ եւ աղտոտեր գետնի ճերմակ քարերը, բարկ հոտ մըն ալ տարածելով սենեակէն դուրս:

Բայց պէյթ Ղազալի լիվանը, տեսնելու էր հալէպեան տուններու այդ գեղեցկութիւններուն մէկ նմոյշը. անելի ուշ, արաբական-սուրիական ֆիլմաշարերուն մէջ սկսան երեւիլ անոնք, հոն կամ նման տուններու մէջ նկարահանուելով:

Այս թաղերուն մէջ կ'ապրէին նաեւ ընկերուհիներէն եւ բարեկամուհիներէն շատեր, որոնք կը վայելէին Քառասնից Մանկանցի հարեւանութեան օրհնութիւնը:

Տարիներ ետք, երբ պատահեցաւ որ կրկին անցայ Հոգետունէն, պահ մը կեցայ Թիլէլի մուտքի կամարին տակ, կասկածելով ինքզինքս՝ արդե՞տ՞ք սխալ մուտքի մը առջեւ եմ ... Ցած ու լայն աստիճաններուն երկու կողմերը ծածկուէր էին աճան եւ անճաշակ հագուստեղէնով, իսկ բակին շուրջի սենեակները բոլորը վերածուէր էին խանութներու. խորհրդաւորութիւն չէր մնացեր, հորը ոչ իսկ կ'երեւէր. չէր երեւեր նաեւ տպարանը, որ կը շարունակէր հոն ըլլալ, թէ ոչ ... (Դիմատեսութեան գրառումի մը մէջ վերջերս տեսայ, թէ տպարանը այնտեղ է եւ կը շարունակէ բանիլ):

Սիրտս տրոփ մը կորսնցուց. օրերուն եւ տարիներուն հետ ոչ միայն յիշատակները կը հեռանային, այլ անոնք կը կորսնցնէին իրենց գոյնը, հարազատութիւնը, վաւերականութիւնը. կարծես մանկութիւնս էր, որ կամաց-կամաց կը տօգնուէր:

Պատերազմի թե՛ օրերուն, երբ Սալիպէի շրջանը գլխաւոր թիրախներէն մեկն էր, շատ մեծ վարագոյր մը փակեր էր մուտքը դէպի ճիտէյտէ, արգիլելով՝ որ մարդիկ հոն մտնեն, թե՛ ժողովուրդին աչքէն ծածկելու այն ահաւոր ակերակը, որ օրէ օր կ'աւելնար ...

Կ'ըսուէր թէ պատերազմը ժողովուրդը «փրկելու» համար էր «բռնաւոր պետութեան մը ճիրմաներէն», բայց կարծես այդ «փրկարարներուն» համար աչքի փուշ դարձեր էր ազնուական եւ դարաւոր մեր քաղաքը իր հնագիտական վայրերով՝ ներսի շուկան, բաղնիքները, խաները եւ անշուշտ՝ քրիստոնէական թաղամասերը իրենց եկեղեցիներով, որոնք հետեւողականօրէն կը ռմբակոծուէին:

Այսօր, փառք տիրոջ, հակառակ դժուարութիւններուն, Հայկաի հին շրջանը սկսած է վերագտնել իր երբեմնի դիմագիծը: Պիտի կարենա՞մ գտնել անոր նեղ թաղերուն մէջ պահուըտած մանկութիւնս:

ՀՈԳԵՎԱՆԳԻՍ

Հանգուցեալ

Նահատակ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՍՏՊԱՆԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ժ. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 21 Մայիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հայկա:

ՇՈՂԻԿ ԱՇԸԳԵԱՆ. «ԱՅՍ ԴՊՐՈՑԻ ՆԻՄԵՐԸ ՇԱՂԱԽՈՒՄԸ ԵՆ ԱՐԵՒՄՏԱՆԱՅԱՍՏԱՆԻ ՇՈՒՆՉՈՎ, ԿԻՒԿԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՌՄԻՈՐ ԱՆՑԵԱԼԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆԵՐՈՎ, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ՎԵՐԱՊՐԱԾ ՆԱՅՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՄԻՆԻՑԵԱՄԲ»

(Լաթաքիոյ Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարանի 100-ամեակի Յոբելիական Հանդիսութեան Արտասանուած Դոկտ. Շողիկ Աշըգեանի Բանախօսութիւնը)

Հայ դպրոցը մերոպաստեղծ տաճար է, անառիկ բերդ է, մարդկային պաշարներու անսպառ շտեմարան է. Ուսումնարան է կրթարան է միաժամանակ:

Հարիւրամեակ մը կ'ենթադրէ 100 տարիներու յաղթարդութիւն ու լինելիութիւն: Կ'արժէ պանծացնել դարու մը աւանդն ու ժառանգութիւնը: Աւանդը կը փոխանցուի, ժառանգութիւնը կը հարստացնէ:

Օրը՝ տօնական է, պահը՝ հանդիսաւոր, ամիսը՝ յոբելիական, ուրախութիւնը՝ համընդհանուր, հանդիսութիւնը՝ հպարտութիւն առթող ու անկրկնելի:

Մեծն Տիգրան Զ.Ա. 83 թուականին կառուցած է Լաթաքիոյ Նահանգիստը: Այդ թուականին հետ կը կապուի նաեւ հայերու առաջին ներկայութիւնը այս քաղաքին մէջ:

Աւելի քան 20 դար ետք, Կիլիկիայէն, Հայաստանի տարբեր քաղաքներէն տեղահանուած ու գաղթական հայեր եւ Տեղասպանութենէն վերապրած տեղաբնիկ հայեր այս անգամ կը հիմնեն իրենց սերունդներուն ինքնութիւնը պահպանելու կոչուած Նահանգիստը՝ Ազգ. Յակոբեանց Երկսեռ Վարժարանը, որ, ըլլալով կրթական յատուկ ծրագիրով ուսումնական հաստատութիւն, պիտի տարբերէր Մեծ Եղեռնէն առաջ Եկեղեցւոյ հովանիին տակ գործած հայերէն կարգաւ- գրել սորվեցնող Ազգ. վարժարանէն:

Բոլորս ժամադրուած ենք այստեղ ամբողջ դար մը կամրջելու 25 Մարտ 1922 թուականին: Երբ այսօրուան նման համաժողովորդային հանդիսութեամբ պաշտօնական բացումը կը կատարուէր Վարժարանին, Նոյն այս շրջանակէն ներս: Հասնելու էնք միամտաբար՝ պանծացնելու Վարժարանին կենսագործութիւնը, արժեւորելու անոր հայապահպանման ու հայակերտման վաստակաշատ աշխատանքը, որ տարբեր են կրթական ասպարէզին նուիրուած բազում ուսուցիչ-ուսուցչուհիներ, տնօրէններ: Անոնց կողքին յիշելով ու գնահատելով նաեւ պաշտօնէութեան մաս կազմող ծառայողական մարզի աշխատասեր անդամները:

Բոլոր անուններուն թուումը երկար ժամանակ կը պահանջէ: Նոր եւ նորագոյն ժամանակներու անձերը անպայմանօրէն ծանօթ ըլլալու են ձեզի, ոմանք՝ ձեր իսկ հարազատները եղած կրնան ըլլալ, կամ են տակաւին:

Երախտագիտութիւն ու յարգանք բոլորին անխտիր, որոնք թէկուզ դոյզն ներդրումը ունեցած են Վարժարանի գոյատեւման, յառաջընթացին, գարգացման, արդիականացման, կրթական մակարդակի բարձրացման, խոչընդոտներու յաղթահարման՝ աչքի լոյս, մտքի ուժ, թանկագին ժամանակ, հոգի, շունչ ու ներշնչում դնելով իրենց աշխատանքին մէջ:

Երախտագիտութիւն ու յարգանք անցնող հարիւր տարիներուն Վարժարանին նիւթապէս նեցուկ կանգնած միութիւններուն, հաստատութիւններուն, հիմնարկներուն եւ անհատ բարերարներուն:

Չնահատանքի առաջին ողջոյնը մահաւանդ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական խորհուրդներուն, որոնք, գաղութի ղեկավար մարմինը հանդիսանալով, 83 տարի անընդմեջ ձեռնհասօրէն ղեկավարել են նաեւ վարժարանը, իսկ անկէ ետք անոնց գործը շարունակել են հոգաբարձու կազմեր: Հարիւրամեայ գործով գաւունք գնահատելով՝ բոլորը խորհրդակնոյ փոխանութիւններուն որպէս, բազում արժանաւորներու մէջ արժանի, 100-ամեակի առիթով կ'արժէ հնչեցնել

Դպրոցի հիմնադրութեան ակունքներուն մօտ կանգնած եւ հետագայ տարիներուն դպրոցական գործի մղիչ ուժն ու ոգին հանդիսացող, կազմակերպչական տաղանդի հետ նաեւ կրթական մարզի մէջ Նոյնքան հմտութիւն ցուցաբերող, կրթօճախի հետագայ գարգացման համար ուղենշային ճամբայ հարթող Պետրոս Զպուքճեանի եւ Ստեփան Լեմոնճեանի անունները: Ամենայն հայոց բանաստեղծ Յովի. Թումանեանին հետեւողութեամբ կրկնելով՝ մարդու գործն է անմահը:

1920-ական թուականներուն դպրոցաշինութեան Լաթաքիոյ օրինակը յատուկ պարագայ մը չէր: Նոյն տենդէն բռնուած էր գաղթական հայութիւնը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Վերականգնումի այդ տարիներուն Սահակ Կաթողիկոսի հովանաւորութեամբ եւ ազգային մարմիններու ջանքերով Հայկաթի, Պէրուի գաղթական շրջաններուն մէջ կը բացուէին դպրոցներ, մէկ տարբերութեամբ սակայն, որ Լաթաքիոյ դպրոցը կ'ամփոփուէր պատմական դարաւոր կառոյց ներս, քարաշէն յարկի տակ:

Այս դպրոցի հիմերը շաղախուած են Արեւմտահայաստանի շունչով, Կիլիկեան պատմական փառաւոր անցելի ու կազմակերպուած հանրային կեանքի ասանդոյններով, Տեղասպանութենէն վերապրած հայու արժանապատուութեամբ, իր վաղուան անորոշ օրուան հանդէպ լաւատես հայու դրականութեամբ, ամէն ինչ կորսնցուցած, բայց ամէն ինչ ոչինչէն Նորէ Նոր վերսկսելու, վերականգնելու, շինելու ու շէնացնելու հայու անսասան հաւատքով, յամառ կամքով, հայու Այբուբենակերտ հոգին անխաթար պահելու որոշումով ու վճիռով:

Վարժարանի հիմնադրութենէն ընդամենը երկու-երեք տարի ետք տեղացի ժողովուրդին պէս դադրելով օսմանցի քաղաքացի ըլլալէ, եւ անոր հետ Նոյն ատեն սուրիացիի քաղաքացիութիւն ստացող լաթաքիաբնակ հայը, ձեռնունայն չէր ներկայանար իր Նոր երկրին, այլ սեփական Դպրոց ունեցող ու գայն պահող, կազմակերպուած ու համայնքային կենսունակ կեանքով ապրող հաւաքականութիւն: Ան իբրեւ այդպիսին մաս կը կազմէր իր Նոր բնակավայրի ժողովորդագրական գունդը խճանկարին:

1922 թուականը նաեւ Լաթաքիոյ Հայ Նոր Գաղութի հիմնադրութեան թուականն է: Գաղութն ու Դպրոցը երկուորեակներ են՝ 100 տարեկան հասակով:

Չնահատելով դպրոցով հայը հայ պահելու, նոր հայը կերտելու դժուար, այլ սխալի ճամբան, արժեւորելով կատարուած ճիգն ու նուիրումը, ժամանակի մը լեցունութիւնը, անկասկած առաջին հերթին մեր աչքին առջեւէն կը տողանցեն դպրոցական սերունդները: Անոնք եղեր են ու են Դպրոցի իսկական տերերը, ուսուցիչներէն ու տնօրէններէն առաջ: Անոնք այսօր աներեւոյթ եկեր ու տեղաւորուէր են այս սրահէն ներս, որովհետեւ իրենց հարիւրամեակն է: Կը լսէք անոնց ձայնը ձեր ներսիդին: Անձամբ կը լսեմ: Անոնք կարժամանակ էին գաղթական հայու գաւակներ: Յետոյ պիտի յաջորդէին անելի լա՛ւ ժամանակներ, հիմա անոնք *սմարթ ֆոնի*, պատանի հասակի ճարպիկ ու խելացի մկնիկներ են, որոնք անվախ ու համարձակ կը նաւարկեն անսահման համացանցի մէջ՝ աշխարհը ամուր առած իրենց ափերուն մէջ: Յաղթական երթը կ'ապահովուի ժամանակին հետ քայլ պահելով:

Անոնք ձեզի ծանօթ դպրոցի դարպասէն ներս

մտեր են թոթով լեզուով ու անկէ դուրս եկեր ու պիտի շարունակեն դուրս գալ հաստատ քայլերով՝ բացուելով կեանքին՝ իրենց աչքին հետ լայն աշխարհին բանալով այս դպրոցէն ստացած մըտքի ու հոգիի կենսանորոգ պաշարները:

Այդ դպրոցական սերունդներով է որ նուաճուած է հարիւր տարին եւ այս հանդիսութիւնը նաեւ նուաճուած ժամանակի մը յաղթատունն է: Մարդեղէնէն բացի իրեղէն աշխարհով ալ նուաճուած է ժամանակը: Մէկ տուփ կաւիճով, երկու



սեղանով, քանի մը դրօշներով, երկու գաւաթով, հորէն շուր քաշելու պարանով ու դոյլով մը ճամբայ ելած դպրոցը ներկայիս յագեցած է կրթական եւ դպրոցավարական աշխատանքը դիւրացնող արդիական անհրաժեշտ բազմապիսի սարքերով:

Ժամանակը ըմբռնելի է ու կ'արժեւորուի իր հոսունութեան մէջ: Բնականաբար դպրոցական դար մը անցելու անպայմանօրէն կ'ենթադրէ յառաջընթաց փոփոխութիւններ. փոփոխութիւն մտայնութիւններու, մտածելակերպի, կրթական ծրագիրներու, վարչարարական օրէնքներու:

Այս դպրոցն ալ անցեր է այդ բնական հունով: Տեսեր է նաեւ պաղ ու տաք օրեր: Կեանքի բնական երեւոյթ:

Ինչ որ չէ փոխուէր ժամանակի ընթացքին, այդ եղեր է Հայ Դպրոցի Գլխագիր Առաքելութիւնը: Տեսականօրէն, թէ գործնական իմաստով որեւէ Հայ դպրոց եթէ շեղի կամ հրաժարի իր հիմնական Առաքելութենէն՝ կը պարպուի իր կուրսէն:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆը տեսական-վերացական հասկացութենէ անելի գործնական, շարունակական ու գարգացող կիրարկումով է բացատրելի: Ժամանակին հետ անելի կատարելիին հասնելու համար բնական է որ փոփոխ առաքելութեան ձեւը, միջոցները, բայց ոչ բովանդակութիւնն ու եականը: Եւ ո՛վ չի գիտեր, որ Կրթութիւն ու Դաստիարակութիւն անբաժանելի բաղադրիչներով **ՀԱՅՑԵՑԻՈՒԹԻՒՆ** է հիմնական առաքելութիւնը Հայ դպրոցին՝ Սփիւռքի տարածքին: (Այդպէս պէտք է ըլլայ հայրենիքի մէջ եւս, անհրաժեշտաբար): Այլապէս ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ դէմ դնել բազմերես ճուլումը հոսանքին, դիմանալ ու կուլ չերթալ համաշխարհայնացումը ապագային քաղաքականութեան, մարդը մարդամեքենայի, աշխարհաքաղաքացիի վերածելու դարու սնանկ փիլիսոփայութեան, ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ պահել հարազատ ինքնութիւն, տակաւին՝ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ ազգային դատ հետապնդել եւ իրաւունքներ պաշտպանել: Այս վարժարանի անունն իսկ խորհրդանշէ է, որ կը վկայէ անոր առաքելութիւնը՝ հաւատար-

ՇՈՂԻԿ ԱՇԸԳԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 8

մութիւն՝ սրբադասուած նահատակներու յիշատակին ու կտակին:

Հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը սահմանագիծ են:

Անկէ նահանջելու տեղ չունինք, իսկ գիշերելու կամ յանձնելու՝ ոչինչ ունինք: Սփիւռքի մէջ ունեցածն ինքնաթիւն մըն է: Այն պահէն երբ նահանջենք այդ առաջնագիծէն, կամայ-ակամայ կորսնցուցած կ'ըլլանք մեր հաւաքական դիմագիծը: Ուրեմն կը մնայ ամուր կանգնած մնալ Հայ Դպրոցի առաքելութեան, ինչ ալ ըլլան պայմաններն ու որքան ալ սահմանափակ ըլլան կարելիութիւնները:

Եւ պատիւ ու յարգանք Գաղութի բոլոր ժամանակներու լուսամիտ ու հեռատես ղեկավարութեանը, պատասխանատուներուն, որոնք յաջողեցին շաղախել, մէջտեղ բերել ու անհաղկան դարձնել հանրային ամրակուռ, ներդաշնակ ու համերաշխ համախոհութիւն՝ դպրոցին վերաբերելով: Անոնք գիտակցեցին վերելն ունեցած անհերքելի ճշմարտութեանը եւ կամեցեր ու կամք դրսեւորեցին այդ ուղղութեամբ, ու մասնաւոր անվերապահօրէն համագործակցեցին՝ թիկունք թիկունքի տուած, որպէսզի կանգուն մնայ Վարժարանը, հաւատարիմ մնալով իր հիմնական առաքելութեան՝ յանուն գաղութի նորահաս սերունդներու լիարժէք կրթութեան ու ինքնութեան անխաթար պահպանման:

Այո՛, այս դպրոցի մէկ դարու պատմութիւնը լաւագոյն ապացոյց մըն է, որ երբ յստակ են հասարակ յայտարար սկզբունքները, ճշդօրէն են կարմիր սահմանագիծերը, հայը գիտէ եւ կրնայ համագործակցիլ: Աւելին, ոչ մէկ փորձ կրնայ հարուածել իր համախոհութիւնը եւ ոչ մէկ խոչընդոտ կրնայ խափանել իր համագործակցութիւնը:

Եթէ գաղթական վիճակի մէջ, հայրենագուրկ պայմաններու մէջ, տեղական լեզուին ու մշակոյթին անձնօթ հայը, դպրոցի հիմնադիրները, հայաշունչ են հայրենաշունչ Հայ Դպրոց են բացեր, մենք իրաւունք չունինք գանգատելու մեր պայմաններէն: Գնահատենք կարելիութիւնները, ճշդենք առաջնահերթութիւնները, գործի ղենք մեր բոլոր հնարաւորութիւնները եւ լծուինք աշխատանքի՝ անցեալի ժառանգութեամբ զինուած, նախորդներուն օրինակով եւ հեռապատկերային հաստատ քայլերով:

21-րդ դարը սովորական դարձած է կոչել արհեստագիտութեան դար՝ մոռնալով որ արհեստագիտութիւնը, ներառեալ արհեստական բանակութիւնը, ստեղծողը մարդկային միտքն է:

Այս դիտանկիւնէն 21-րդ դարը անելի քան որեւէ այլ դար ուղեղներու դար է: Պէտք է այս գիտակցութեամբ եւ մեծ պատասխանատուութեամբ մօտենալ **ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ**՝ մշակելով մարդկային պաշարներու մեր աշխարհայեացքն ու համալիր ռազմավարութիւնը: Եթէ կ'ուզենք մեր գաղութի մօտակայ ապագան գուշակել՝ պէտք է առաջ-

նահերթ դարձնենք Դպրոցն ու անոր կարիքները: Ինչ գոհողութիւն ալ յանձն առնենք կամ առնելու ըլլանք սերունդներու դաստիարակութեան ու անոնց բարձրամակարդակ ուսում ջամբելու ուղղութեամբ՝ շահաւորը մենք ենք անկասկած:

Վարժարանի տարեգրութեան 80 տարիները անցած են նախակրթարանի կարգավիճակով եւ Վերջին 20 տարիները՝ միջնակարգի: Այլ խօսքով անելի նախակրթարանի՞ մը 100-ամեակն է որ կը նշուի այսօր: Տրամաբանօրէն՝ այո՛, իրողութիւնը այդպիսին է, բայց իրականութիւնը՝ բնա՛ւ եւ երբեք: Նախակրթութիւնը հիմքն է կրթութեան: Եւ ամէն բանի հիմքն է կարելորդը: Եթէ հիմքը ամրակուռ է՝ շէնքը կը մնայ կանգուն, կը դիմանայ նոյնիսկ զօրաւոր ցնցումներուն: Նոյնը դաստիարակութեան մարզին կը վերաբերի: Այս առումով բառացուցական է Աւետարանին թելադրանքն ու պատգամը, որ կ'ըսէ. *«Կրթե՛ մանուկը իր ճամբան սկսած ատեն, որպէսզի ծերութեան ատենն ալ անկէ չխտորի»*: Մարդակերտումի ու Հայակերտումի հիմքը կը դրուին մանուկ հասակէն: Գիտելիքի հետ համատեղ, հոգեմտաւոր բազմակողմանի կրթութեամբ կը ձեւաւորուի արժեքային հաստատուն համակարգ, որուն շնորհիւ կը յատկանշուի մարդը ընդհանրապէս: Սփիւռքի տարածքին չկայ ոչ մէկ գործ որ այնքան առաջնահերթ ըլլայ որքան սերունդներու կրթութեան գործը:

Հարիւրամեակի առիթով Վարժարանի Հոգաբարձութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցեր է եւ Թադ. Խորհուրդի ու Դպրոցի արխիւները օգտագործելով իրագործեր է Յուշամատենի մը հրատարակումը: Ան փափաքեր է, որ Դպրոցի անցած ուղին թաղուած չմնայ արխիւներու մէջ՝ մոռացութեան մատնուելով, այլ կենսի կոչուի. դառնայ կարդացուող պատմութեան ու ներկայի մաս: Հրատարակուած Յուշամատենը վաւերագրութիւնն է անցած 100 տարիներուն եւ առատ հում նիւթ կը պարունակէ Դպրոցի պատմութեան մասին: Բնականաբար 100 տարիները անկարելի է պարփակել Յուշամատենի մը համար նախատեսուած սահմանափակ էջերու մէջ, մանաւանդ որ նախապէս գիրք կամ յուշամատեն չէ հրատարակուած դպրոցի մասին:

Յուշամատենը արգասիքն է հաւաքական աշխատանքի մը, որուն մէջ իրենց բերած հետեւողական ու բծախնդիր մասնակցութեամբ գնահատանքի արժանի են Հարիւրամեակի առիթով կազմուած Յանձնախումբի մէջ Թադ. Խորհուրդի ներկայացուցիչն ու Վարժարանի հոգաբարձութեան ատենապետուհին:

Ձեզի ծանօթ առկայ դժուարին պայմաններուն մէջ, բոլոր աշխատողները ըրեր են իրենց առաւելագոյն կարելին՝ լաւագոյն արդիւնքի հասնելու համար: Կատարուած աշխատանքը գնահատելով վերապահուած կը մնայ ընթերցողներուն:

Ոմանք կրնան այս հանդիսութիւնը նկատել ուշացած, տրուած ըլլալով որ 100-ամեակի Յոբելիական հանդիսութիւնը կը կատարուի

2023-ին, փոխանակ 2022-ի մէջ: Բայց այս հանդիսութիւնը իրապէս կը տեղադրուի 100-ամեակի շրջագիծի մէջ: Որովհետեւ որեւէ Դպրոցական տարեշրջան կ'երկարի երկու տարիներու վրայ:

Աւելին, այս հանդիսութիւնը գեղեցիկ գուգադիպութեամբ կը համընկնի Դպրոցի տարեգրութեան մէջ յատկանշան թուականի մը: 1922 Հոկտեմբերին ճամբայ ելած Վարժարանին առաջին տարեշրջանը, առաջին հարիւրամեակի առաջին տարին, կ'աւարտէր 13 Մայիս 1923-ին: Այս հանդիսութեամբ լրումին կը հասնի 100-ամեակին նուիրուած ձեռնարկները: Վաղը 13 Մայիս է: Վաղուրէ վարժարանը կը թելադրուի իր երկրորդ հարիւրամեակը, եւ ընդամենը մէկ կամ երկու ամիս ետք պիտի տայ իր նոր հարիւրամեակի շրջանաւարտներու առաջին հունձըը:

Այս Յոբելեանը նշանակալից է նաեւ ըլլալով Լաթաքիոյ **ՄԵԿ ՀԱՏԻԿ** դպրոցին հարիւրամեակը:

Սփիւռքակայ Բնաստեղծ Վահան Թեքէեան իր միակ աչքին նուիրած գեղեցիկ քերթուած մը ունի, «ՄԵԿ Հատիկս» վերնագրով, ուր կ'ըսէ. *«Իմ մէկ հատիկս ... օհ, ինչպէ՛ս սիրտս վրադ կը դողայ // Երբ կը տեսնեմ քեզմով քեզ»*: Սրբոց Նահատակաց վարժարանը գաղութի պատկերն է: Անով Գաղութը «կը տեսնե՛ք» ինքզինքը: (Տեսնելը՝ իր ուղիղ եւ փոխաբերական իմաստ-

ներով):

Արդ, աչքի լոյսի պէս պէտք է դողալ մէկ Հատիկ վարժարանին վրայ, որ իբրեւ արթուն աչք՝ անով գաղութը շարունակէ դիտել ինքզինքը, անով լայն տեսադաշտի վրայ գննէ իր անմիջական շրջապատը եւ հայեացքը սեւեռէ մեր մեծ երազներու իրականացման ուղղութեամբ, որ լաւապէս եւ ճիշդ ընկալէ աշխարհի վերիվայրող իրադարձութիւնները:

Յեղասպանութեան նահատակներէն արեւմտահայ բնաստեղծ Սիամանթօս Առաջին Հայ Դպրոցի առաջին հիմնադիր Ս. Մեսրոպ Մաշտոցը կը պատկերաւորէ իբրեւ *«Հայ դարերուն դիմաց կեցող աղամանդեայ ապառաժ»*: Բոլոր դարերու եւ բոլոր ժամանակներու ամենամեծ, ամենէն լուսամիտ, ամենէն հեռատես ու ամենէն հմուտ ու ամենէն նուիրեալ ուսուցիչը ահաւասիկ, մէկ դար ամբողջ իբրեւ այդպիսին է Լաթաքիոյ մէջ:

Այնքան ատեն որ Հայ Դպրոցը կայ ու կը գործէ անմահ է Ս. Մեսրոպ Մաշտոցը: Եւ այնքան ատեն որ Ս. Մեսրոպ Մաշտոցի լեզուն կը ինչէ՛ կ'ապրի՛ հայը:

Պիտի ապրի՛ հայը, ու պիտի կեցցէ՛ Հայ դպրոցը, Լաթաքիոյ մէջ նաեւ:

Ուրեմն, օ՛հ, դէպի նոր ու լուսաւոր հարիւրամեակ՝ անսպառ քիրտով ու քրտինքով, անսակարկ նուիրումով եւ վառ տեսլականով:

Երթո՛ք՝ աննահանջ՝ Սրբոց Նահատակաց վարժարան:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութեան Կալուածոց Հոգաբարձութիւնը կը տեղեկացնէ, որ երկրաշարժէն վնասուած ազգապատկան բնակարաններու վարձակալները կամ զանոնք զբաղեցնողները ներկայանան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ներքնասրահը՝ օգտուելու վերաշինութեան օժանդակութիւններէ:

Դիմողները իրենց անձնաթուղթի պատճենով կրնան ներկայանալ մինչեւ 25 Մայիս 2023:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիլմբոջեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյէան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբոջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Մարդոց գովասանքին պիտի արժանանաք ձեր իւրայատկութիւններուն շնորհիւ: Լաւատես եղէ՛ք եւ յառաջացէ՛ք տր թափով: Հիանալի էք:



Յուլ

Չափազանց հաւատարիմ ու վըստահելի էք: Մարդիկ կուրորեն կը վըստահին ձեր կատարած գործերուն, որոնք խաղաղութեամբ կ'ընթանան դէպի յաջողութեան նաւահանգիստ:



Երկուորեակ

Միամիտ էք, բայց աշխատասեր ու բոլորին սիրելի: Ձեր ընկերները անկեղծութեամբ կը մօտենան ձեզի եւ դուք կ'օգնէք անոնց առանց որեւէ ակնկալութեան:



Խեցգետին

Չափազանց հետաքրքիր էք ձեր ընկերներուն եւ շրջապատին հարցերով: Անհրաժեշտ է, որ առանց վիճելու օգնութեան ձեռք երկարէք անոնց:



Առիծ

Ձեր վեհանձնութեան պատճառով նոր գործի մը առաջարկը պիտի մերժէք եւ գոչաք: Չափազանց մտահոգ էք ձեր ընտանեկան հարցերով, որոնք աստիճանաբար պիտի լուծուին:



Կոյս

Նոր բարեկամներու հետ հաճելի ժամեր պիտի անցընէք եւ հոգեպէս բարեփոխուիք: Փոքր նիւթական պարգեւ մը խորապէս պիտի գուարճացնէ ձեզ:



Կշիռք

Ամբողջ էութեամբ նուիրուած էք ձեր գործերուն, որոնք յաջողութեամբ պիտի պսակուին: Մարդոց կողմէ գնահատանք մի՛ ակնկալէք:



Կարիճ

Ձեր նոր ծրագիրները դէպի յաջողութիւն կը յառաջանան: Կասկածամիտ մի՛ ըլլաք: Լաւ ընկերներ միշտ ալ կան: Երբեք առանձին մի՛ գգաք:



Աղեղնաւոր

Յարատեւ վարձատրեցէ՛ք ձեր ընկերներուն եւ ընտանիքի անդամներուն ցուցաբերած գոհողութիւնները: Հաճելի հանդիպում մը պիտի ունենաք հին բարեկամի մը հետ:



Այծեղջիւր

Քաջութեամբ լիցքաւորուած հաստատակամ քայլերով դէպի յաջողութիւն պիտի երթաք: Նախանձելի էք եւ մարդոց գովասանքին արժանի: Հպարտացէ՛ք:



Ջրհոս

Չափազանց հանդարտ անձնաւորութիւն էք: Ձեր բոլոր գործերը կ'իրագործէք մէկ առ մէկ՝ խելամտութեամբ: Ընտանիքին անդամները ձեր հոգատարութեան կարիքը ունին:



Ձուկ

Ընթրիքի հրաւեր մը պիտի ստանաք եւ հաճելի մարդոց ներկայութիւնը վայելէք: Անկեղծ բարեկամ մը նիւթական օժանդակութիւն մը պիտի ստանաք:



Նուշիկ Սողոյեան-Առաքելեան

ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ԱՒԱՆԴՈՅԹՆԵՐ

Յիսուս Զրիստոսի Համբարձման տօնը ոչ միայն կրօնական բնոյթ ունի, այլեւ ժողովրդական անանդութիւններով հարուստ է: Տօնին ընդհանրացած սովորութիւններէն են ծաղկահաւաքը, վիճակաձգումը, ուխտագնացութիւնը եւ կաթնապուրի պատրաստութիւնը:

«Համբարձում»-էն զատ տօնը ունի նաեւ այլ անուանումներ, ինչպէս՝ Ծաղկաքաղի օր, Ծաղիկ գովել, Վիճակի օր, Ջան Կիւլիմի օր, Ճակատագրի տօն, Ծաղկատօն, Կաթնապուրի տօն ...:

Աւանդութեան համաձայն, Համբարձման նախորդ օրը աղջիկները եօթ ծաղիկէ փերթեր կը հաւաքէին ու կը լեցնէին եօթ աղբիւրէ լեցուած ջուրի կուժին մէջ: Անոնց կ'աւելցնէին իւրաքանչիւր անձի յատուկ իր մը: Յաջորդ օր իրերը կուժէն դուրս բերելու գործողութիւնը կը վիճակուեր կրտսեր աղջկայ մը՝ տաղերու երգեցողութեամբ: Կարգ մը վայրերու մէջ ուխտաւորներ Ս. Պատարագէն ետք կաթնապուր կը ճաշակէին: Քանի մը շերտի ալ կաթնապուրէն արտերուն մէջ կը թափէին, որպէսզի առատ բերք ունենային:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏԱՆՏԻԿՆՈՋ

- Եթէ տապկոցի ձէթին մէկ ապուրի դգալ քացախ աւելցնենք՝ բանջարեղէններուն ձիթաիւղի ներծծումը կը նուազի:

- Եթէ պանիրի պատրաստման ատեն 2 դգալ շաքար աւելցնենք անոր վրայ, դիւրին-դիւրին չի մգլտիր եւ երկար ժամանակ կը դիմանայ:

- Եթէ ձիւնասպիտակ բրինձ պատրաստել ուզենք՝ ջուրը եռալէն ետք անոր մէջ քանի մը կաթիլ կիտրոնի հիւթ պէտք է աւելցնենք:

- Եթէ հում միսը դիւրութեամբ կտրուտել ուզենք՝ 10 վայրկեան զայն սառնարանը պէտք է պահենք:



- Սմբուկին լեղի համէն ձերբագատելու համար՝ աղ-ջուրի մէջ պէտք է պահենք զայն, մօտաւորապէս կէս ժամ: Իսկ տապկելէ առաջ ալ պտղունց մը ալիւր եթէ ցանենք՝ քիչ ձէթ կը սպառենք:

- Եթէ կարկանդակին մակերեսը սենյայ եւ այրի, կարելի է սեւցած մասը քերթել, վրան փոշի շաքար ցանել ու կրկին փուռը դնել, մօտաւորապէս 10 վայրկեան:



- Կիտրոնէն առատ հիւթ ստանալու համար, քամելէ առաջ պէտք է կէս ժամ զայն պահել տաք ջուրին մէջ:

- Մրջիւնները շաքարամանէն հեռացնելու համար քանի մը հատ մեխակ գետեղէլ շաքարին մէջ:

- Հաւկիթը խաշած ատեն մէկ ապուրի դգալ քացախ աւելցնել ջուրին մէջ, որպէսզի միջուկը դուրս չելլէ:

- Աղցանին աղը աւելցնել նախքան սպասարկելը, որպէսզի բանջարեղէնները չթոռմին:





Ռաֆֆի Սիլահեան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականի խմբապետ Օմար Սոման դարձաւ Ասիոյ լաւագոյն ռմբարկուն՝ նշանակելով 302 կոլ իր մարզական կեանքի ընթացքին: Այս կոչումը նախապէս վերապահուած էր սեուտացի խաղացող Մաճետ Ապտալլային, որարձանագրած էր 301 կոլ:



- Սուրիոյ պասքէթի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, Զալէայի Աիլին 82 - 72 արդիւնքով պարտութեան մատնեց Զամայի Նաուաիր կազմը եւ գրաւեց աղիւսակին առաջին դիրքը, իսկ ճալաարը 81 - 57 արդիւնքով յաղթեց Զըթթինին: Դամասկոսի մէջ բարձրորակ մակարդակի մրցումէ մը ետք, Ուահտէն 88 - 80 արդիւնքով յաղթեց Զարամէին, իսկ Ուասպէն 69 - 80 արդիւնքով զիջեցաւ Թըշրինին:

- Զալէայի ճալաար ակումբը անակնկալ որոշումով մը պաշտօնագուրկ յայտարարեց պասքէթի տղոց խումբի մարզիչ Ճորճ Շաքարը, զայն փոխարինեց Լիբանանի Զոփս խումբի մարզիչ Զիատ Նաթուր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԵՆԵՆ ՊԱՐԱՆՁՈՒԾ Ե ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆԻ ԿՈՐՄԵ

Ըստ El Nacional-ի, Ֆրանսայի ախոյեան Փարիզ Սան ժերման հետաքրքրուած է Ռեալ Մատրիտի 27-ամեայ ֆրանսացի պաշտպան Ֆերլան ՄԵՆՏԻի ծառայութիւններով:



ՄԵՆՏԻի ծառայութիւններով: Փարիզեան ակումբը Ռեալէն զինք փոխարէլու համար առաջարկած է 30 միլիոն եւրո: Արքայական ակումբը պատրաստ է վաճառել Ֆերլան ՄԵՆՏԻին, սակայն կը քննարկէ 45 միլիոն եւրոյով սկսող առաջարկներ: Ֆերլան ՄԵՆՏԻն մաս կը կազմէ Ռեալին 2019-էն ի վեր:

Անոր պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ Յունիս 2025: Ընթացիկ մրցաշրջանին ան իտալացի Գարլօ Անչելոթիի գլխավորած կազմին հետ մասնակցած է 25 հանդիպումի, կատարելով միայն մէկ կոլային փոխանցում:

ԶԱԼԱՆՏ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ՓԱՅՆՈՒՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

Անգլիոյ Մանչեսթըր Սիթիի յարձակողական խաղացող Էրլինկ Զալանտ Անգլիոյ ընթացիկ ախոյեանական մրցումներուն շարունակելով իր փայլուն արդիւնքները դարձաւ 36 կոլի հեղինակ: 22-ամեայ նորվեկացի խաղացողը բարելաւեց իր դիրքը Փրեմիեր Լիկի մրցաշրջանին նշանակած կոլերու թիւով: 36-րդ փուլի քատալոնացի ժոզէփ (ՓԷՓ) Կուարտիլայի գլխավորած կազմը Լիվըրպոլի մէջ տեղի ունեցած Ասթոնվիլլայի հանդիպումին յաղթեց 2 - 0 արդիւնքով, որուն երկրորդ կոլը Զալանտը նշանակեց: Այս մրցաշրջանին Զալանտ 12 կոլ եւս նշանակած էր Զեմփիլընզ Լիկին, 3 կոլ՝ Անգլիոյ գաւաթի խաղարկութիւններուն:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 438)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2			■	■	■	■						
3		■				■					■	
4							■					
5					■		■	■			■	
6		■	■	■	■		■					
7								■	■			
8		■			■		■					
9				■	■	■	■	■	■	■	■	■
10	■											
11												
12			■			■		■		■		

Հորիզոնական

- 1- Ձիւն, վճիտ: Յօժար:
- 2- Հակառակ՝ եական բայ: հովուական գաւազան: Յետոյ:
- 3- Բաց կապոյտ: Կշիռքի միաւոր:
- 4- Աշուղ: Արական անուն:
- 5- Արժեք: Յաւի ճիշ: Անձնական դերանուն:
- 6- Յարաբերական դերանուն: Բառի ծագում:
- 7- Բորոտ: Ահաւասիկ:
- 8- Գիւղ՝ Թալիկի տարածաշրջանին մէջ:
- 9- Պայտ: Հողակոշտերը փշրող գործիչ:
- 10- Ռուբէն Տեր Մինասեանի հատորներէն «Հայ Յեղափոխականի Մը»:
- 11- Արամ Հայկազի հատորներէն:
- 12- Լեցուն: 4060: Հակառակ՝ տառի մը անունը:


Ուղղահայեաց

- 1- Անգուլթ, դաժան: Բայական լծորդութիւն:
- 2- Հակառակ՝ ժամանում: Յարաբերական դերանուն: Ամուսինը մահացած կին:
- 3- Խառնատառ՝ հերիք: Հակառակ՝ մսային լար:
- 4- Բայց: Շաղկապ: Առատ:
- 5- Ձայնանիշ: Շաղկապ: Յուցակ:
- 6- Հակառակ՝ աղբիւր: Հակառակ՝ Աստուծոյ կտակած գիրքերը:
- 7- Բայց: Խառնակ վիճակ:
- 8- Հակառակ՝ բիծ: Հակառակ՝ 7060:
- 9- Թատերական գործողութեան բաժանում: Կայծակ:
- 10- Միատեսակ: Ձայնաւոր տառեր:
- 11- Ժխտական նախածանց: Ահաւասիկ: Հակառակ՝ գրաբար «օր»:
- 12- Խօսքով վարպետ: Նախածանց:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 437)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ւ	պ	ա	ն	ն	ա	կ		ի	ի	ճ
2	ն	ա	ր	ւ	ա	ն	ն	գ		ա		
3	ա	ր	ւ	ն	է	ր	կ	ա	ն	է	ա	ն
4	պ		ն	ա	մ	ա	ր	հ		ի	ն	կ
5	ա			ւ		ն		է	ի			
6	ւ	ա	ի		մ	ի		ի	ր	ա	?	
7	է	ր	բ		ի	ա	կ	ա	ն			
8	ն	է	դ	ն	ւ		ի	ա	է	ի		մ
9	ն		ւ	ր			տ			ի	ի	
10	ի	ն	վ	հ	ա	ն	ն	է	ւ	է	ա	ն
11	ա	ի	ն	կ	ա	ա	ա	ր	ա			
12	ր	?		ն	կ	ա	կ	է	տ			

ԼՈՒՐԵՐ





ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐՔԱԶԱՆ...

Մկրտչի 1

Սրբազան Հայրը աղօթեց, որ հաստատ մնանք մեր կոչումին մեջ, ձեռք ձեռքի տալով մեր ազգին եւ ժողովուրդին շահերը գերադասելով մեր անձնական շահերէն եւ վեհ արժեքներու համար աշխատինք, որպէսզի լաւագոյնս արժեւորուի մեր կեանքը:

Այնուհետեւ, Հոգւոյ Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին սրբատառ կոնդակը, ուր Վեհափառ Հայրապետը ընդառաջելով Սրբազան Հօր խնդրանքին, անազութեան պատիւ եւ տիտղոս կը շնորհէ Արժ. Ս. Վազգէն Զնկ. Զեռնկերեանին, առ ի գնահատանք Թեմէն Ներսի քահանայական քերուլն

ծառայութեան: Ներկաները յուրընկայս ունկնդրեցին հայրապետական կոնդակը: Արարողութիւնը ավարտին հասաւ Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

Ապա տեղի ունեցաւ աջահամբոյր ի պատիւ Սրբազան Հօր:

Ուրբաթ, 12 Մայիսի յետմիջօրէին բացումը կատարուեցաւ վարժարանի 100-ամեակին նուիրուած վաւերագրական ցուցահանդէսին:

«Գանձասար» քահիին մէջ տեղի ունեցած ցուցահանդէսին բացումը կատարեցին Սրբազան Հայրը, վարժարանի տնօրէն Հոլմի Տէյիրմենճեան-Գարամարտեանն ու հոգաբարձութեան ատենապետուհի Մեղրիկ Ապահունի-Մանճեանը, ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի յարաբերական մարմնի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեանի, ազգային պատասխանատու Յարութ

Գաբրիէլեանի, Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վազգէն Ա. Զնկ. Զեռնկերեանի, Զեսապի հոգեւոր տեսուչ Հոգւոյ Ս. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեանի, Հոգւոյ Տէր Մանուկ Վրդ. Պարիխանեանի, Ազգ. երեսփոխանական ժողովի եւ Ազգ. Վարչութեան, միութիւններու ներկայացուցիչներու, վարժարանի հոգաբարձութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան, ցուցահանդէսի կազմակերպիչ յանձնախումբին եւ հրաւիրեալներու:

Ուրբաթ, 12 Մայիսին, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, տեղի ունեցաւ վարժարանի 100-ամեակին նուիրուած յոբելիական հանդիսութիւնը: Օրուան բանախօսն էր պատմական

գիտութիւններուն դոկտ. Շողեր Աշրգեան: Այս առիթով ընթերցուեցաւ նաեւ վարժարանի 100-ամեակին առիթով ՆՕՏՏ Արամ Ա. -ի սրբատառ կոնդակը:

Հանդիսութեան ընթացքին Հոգաբարձութեան կողմէ պարգեատուեցաւ վարժարանի վաստակաշատ տնօրէնուհի Հոլմի Տէյիրմենճեան-Գարամարտեան: Հանդիսութեան ավարտին տեղի ունեցաւ վարժարանի 100-ամեակին յուշամատենակին շնորհանդէսը:

Լաթաքիա իր հովուական այցելութեան առիթով Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց Լաթաքիոյ կուսակցապետին, նահանգապետին, ոստիկանապետին, կրօնական կայուածներու տնօրէնին եւ յոյն ուղղափառ համայնքի Լաթաքիոյ Առաջնորդին, ապա մեկնեցաւ Զեսապ:

